

ՉԱՅՆ

ՀԱՄԱՇԵՆՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ Անվճար

2010թ. հուլիսին ինձ բախտ վիճակվեց փոքր խմբով այցելել Արդվինի և Ռիզեի նահանգների համալսարանների բնակավայրերը: Այս երկար փափագած ծրագիրը վերջապես իրականություն դարձավ: Կարճ ժամանակամիջոցում մեր խումբը հնարավորություն ունեցավ շփվելու Արդվինի նահանգի հոփայի գավառի Մաքրիալի (այժմ՝ Քենալիալա) շրջանի նախկինում բռնի կրոնափոխված հայախոս համալսարանների ներկայիս սերունդների հետ, այցելել նրանց ամառային արտավայրը, որը գտնվում էր Արդահանի նահանգի Բիլբիլեն համ կոչվող վայրում (Bilbilien Han

ընդամենը մի քանի տարի է, ինչ իմացել են իրենց հայկական ծագման մասին: Տեղացիների վկայությամբ՝ հոփայի և Բորչկայի գավառներում այսօր հայախոս համալսարանների թիվը հասնում է 25-30 հազարի: Սակայն այդ հայախոսների մեջ կան նաև այնպիսիները, ովքեր առիասարակ խուսափում են իրենց ծագման մասին խոսել, իրենց հայտարարում են թուրք կամ լավազույն դեպքում՝ համալսարանի (հոմալսարանի) կառուցած մնալով իսլամից: Այլ է պատկերը թուրքախոս համալսարանների միջավայրում: Այստեղ թուրքացումն առավել խորը արմատներ է գցել: Մեզ հանդիպածներից շատ քչերն էին խոսում իրենց հայկական ծագման մասին: Մի մասն իրեն համարում էր թյուրքական ցեղերից սերված: Սակայն այստեղ էլ առկա են լոկալ տեղական ինքնության դրսևորումներ, որի արդյունքում Ռիզեի համալսարանների մեջ

խոսվածքներով հանդերձ, համարվում է հայերենի ամենից խրթին բարբառներից մեկը: Նրանում պահպանված գրաբարյան լեզվական շերտերը վկայում են բարբառի հնագույն լինելու մասին: Այդ են փաստում նաև տարածաշրջանի տեղանուններում առկա վաղնջահայկական արմատներն ու ածանցները: Մեր գրառած միկրոտեղանունները հասնում են հարյուրի, և կարող են լրացնել արդեն իսկ մի քանի հեղինակների գրանցած տեղանվանական հավաքածուն: Նշենք, սակայն, որ կան նաև այնպիսի թուրք գիտնականներ, որոնք բացահայտ Չամշենի բարբառով հայկական միկրոտեղանվան մեջ արհեստականորեն փնտրում են թյուրքական, դրոզական, դիչաղական արմատներ ու ածանցներ՝ նպատակ ունենալով ժխտել Չամշենում հայկականության որևէ փաստ կամ հետք:

րոտեղանունները, լինելով լեզվական և աշխարհագրական արժեքավոր փաստեր, ավելի մանրամասն պատկերացում են տալիս տվյալ տեղանքի, աշխարհագրական դիրքի, բուսականության, բնակչության զբաղմունքի, լեզվական իրողությունների մասին: Դրանք կոնկրետ մեկ ժողովրդի մշակութային արդյունք են և մեկ ժողովրդի լեզվական փաստ: Նշենք մեր գրանցած տեղանուններից մի քանիսը՝ Արվիալի (աղբ+ի+ալի), Դոմխաբակ (տոսախ+դոցխի-ծառատեսակ+բակ), Գալի (կալ+եր), Ընգեղուք (ընկույզ+ուտ), Խաջուր (խաջ+ ագ+թուր+դուր), Լորուտ (լորենի-ծառատեսակ+ուտ), Ձեղովիթ (ծաղ+ծեղ-եգիպտացորենի տերև+հովիտ), Ցաքուք (ցախուր Չամշենի բարբառի հոփայի խոսվածքում նշանակում է անտառ), Փագեղեղ (փագեն+փակեն+տեղ)՝ Չամշենի բարբառում փագեն

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԱԿՅԱՆ
ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի օսմանագիտական կենտրոնի ղեկավար, ք.գ.թ. դոցենտ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՐԱՄՇԵՆ. ՍՈՌԱՑՎՈՂ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

yaylasi): Արդահանից Բիլբիլեն համ ճանապարհին՝ Բաղդաշեն գյուղի մոտ, տեսանք մի ազդեցիկ, կիսականգուն բերդ, որը տեղացիներն անվանում էին Բագրատունի քաղաքի (Բագրատունու բերդ):

Այնուհետև մեր խումբը հանդիպեց Ռիզեի նահանգի Չամլիհենձին գավառի (Ներքին Վիժե) կրոնափոխ թուրքախոս համալսարանների հետ: Չամլիհենձին գավառի նյութեր գրառեցի նաև Արտաշենի գավառի Օջե (Օձե-Լ.Ս.) գյուղում, որն ուներ 140 տուն կրոնափոխ թուրքախոս համալսարանի բնակիչ: Այն գտնվում էր Սև ծովին դիմա-հայաց բլրի վրա և թաղված էր պտղատու այգիների մեջ:

Մեր խմբի կազմում էին «Չայն համալսարան» թերթի գլխ. խմբագիր, բռնի կրոնափոխված համալսարանի պատմությունը, բարբառը և բանահյուսությունը շուրջ երեք տասնամյակ ուսումնասիրող Սերգեյ Վարդանյանը, բանասեր, երգահան Ռուզան Սահակյանը, բանասեր Քեյսի Գունդակչյանը: Մեզ ուղեկցում էին Ստամբուլի «Վոլ ա» վոկալ-գործիքային համույթի ղեկավար, համալսարանների մի շարք երգերի կատարող, ծնունդով մաքրիալցիներ Չիքմեք Աքչիչեքը, գրող Մահիր Օզբանը, ծագումով Ռիզեի նահանգի Չամլիհենձին գավառից համալսարաններ, լրագրող, գրող Արման Գենչը և գիտնական Ուլուր Բիրյուլը, որոնց շնորհակալություն ենք հայտնում ճանապարհորդության ժամանակ մեզ աջակցելու համար:

Ուղևորության ընթացքում մեզ հաջողվեց հավաքել չամլիհենձին արժեքավոր ժողովրդագրական, ազգագրական փաստեր, լուսանկարել պատմական բնակավայրերը, գրանցել բարբառային բառեր, անձնանուններ, տեղանուններ, խաղիկներ ու պարեր: Այդ բացառիկ նյութերի կողքին առանձնակի արժեք են ներկայացնում նաև մեր գրանցած միկրոտեղանունները:

Նշենք, որ հոփայի և Բորչկայի գավառների հայախոս համալսարանների մի հատվածն իր բարբառի շնորհիվ ունի որոշակի հայկական ինքնության զգացողություն, նրանց մի մասը սահմանափակվում է ընդամենը ընդունելով իր հայկական ծագումը: Առիասարակ նրանց մոտ տարածում ունեն մարքսիստական գաղափարները և նրանք իրենց համարում են աթեիստ: Մեզ հանդիպածներից ոմանք ասում էին, որ



Բիլբիլեն համ յայլայում:

կան այնպիսիները, որ իրենց զգում են ոչ թուրք, ոչ հայ, այլ ուղղակի համալսարանի (Hemsini): Նշենք, որ տեղացիների վկայությամբ Ռիզեի մի շարք գավառներում արմատական իսլամը շարունակում է ամուր դիրքեր ունենալ:

Այնուհանդերձ, թեև Ռիզեի նահանգում ապրող մայրիկներն ու բռնի մահմեդականացված-թուրքացված համալսարանների ներկայիս սերունդները այսօր մոռացել են իրենց մայրենի հայերենի Չամշենի բարբառն ու հայկական ինքնությունը, բայց բազմաթիվ կենցաղային բառերի հետ շարունակում են գործածել իրենց բնակավայրերի՝ մեծերից ավանդված տեղանուններն ու միկրոտեղանունները: Կան այնպիսի տեղանուններ, որոնք երբեմն ենթարկվելով բառապատկերի լրիվ աղճատման՝ առաջին հայացքից թվում են օտար, անհասկանալի: Իրականում, սակայն, տեղական բարբառային կամ օտար հնչյունական շղարշով պատված տեղանվան մեջ անթեղված է մաքուր հայկական բառն իր ձևափոխությամբ: Ուստի՝ Չամշենի տեղանունների վերականգնումը բարդ խնդիր է, քանի որ դրանց մի մասը կազմվել է նաև տեղական բարբառային բառապաշարից՝ խոսվածքային հնչարտասանական նստվածքով: Նշենք, որ Չամշենի բարբառն իր



Բագրատունիների բերդը Բաղդաշեն գյուղի մոտ, լուսանկարը՝ Լ. Սահակյանի:

ժողովրդական այդ տեղանունները հիմնականում գրանցել ենք Ռիզեի նահանգի Չամլիհենձին գավառում գտնվող Արդեր (ինձ՝ Արտեր, բարբառն բնորոշ ր>յ հնչյունափոխությամբ), Մաքրիա, Չաթ (Մախկիհում՝ Տափ) և Շենյուվա (Մախկիհում՝ Չիհնիվա), Արտաշենի գավառի Օջե բնակավայրերում:

Միկրոտեղանունները հիմնականում կազմվում են տեղական բարբառային բառապաշարից, ունեն իրենց խոսվածքային տարատեսակները, հաճախ հանդես են գալիս որպես բառակապակցություն: Միկ-

ասում են գերաններից պատրաստված փայտաշեն պահեստին, Փիլիմոնտ (փիլիմոն-խոտաբույսի տեսակ+ուտ), Փողփառուք՝ ծառատեսակ է (փող+փայտ+փառ+ուտ), Քամիքելոլ (քամի+գլուխ+քելոլ), Քարեղոլ (քար+ե+տեղ), Քեթմեք (գետ+(ա)+մեք) և այլն:

Մաքրիա գյուղում գրանցեցինք՝ Ակուփի դաղ-Չակրի լեռ, Արանի չայըր (մարգագետին), Խաջինա+խաջինա, Չաղնի-հեղև+խաջին հետև (գյուղանուն), Չեղեն փոս+հետևի հարթավայր, Մարկուսի լեռ, Մարանի (Մառան) լեռ, Մեղոյի յայլա (Մեղվի յայլա), Մելիքի փոս, Քոբոշ (գյուղանուն, հավանաբար կոկոզ/գոգոշ-խխուսիցի պատյան բառի աղավաղված ձևն է), Շաղնիղ (կազմվել է շաղ-ցող, եղյամ և տեղ բառերից), Մեկվոր/Մեղեվոր, Չուլինա միկրոտեղանունները: Գրանցեցինք նաև որոշ հին տոհմանուններ՝ Անտոնի տուն, Ալեքսի տուն, Ավեթիքի տուն, Բեգիի տուն, Բոջոս-Պողոսի տուն, Գավազի տուն, Գինոսի տուն, Խաչիկի տուն, Կիրակոսի տուն, Դարբինի տուն, Զոգիքի/Քոզիքի տուն, Փետրեխի (Պետրոսի) տուն, Փիրիկի տուն, Մագիկի տուն, Մուսիկի տուն, Փիսիկի տուն, Փուլադի տուն, Խաչիկլեր (Խաչիկի տուն), նախկինում գործածված անձնանուններ՝ Գասպար, Թաքուշ (Թագուհի), Խաթուն, Խաչատուր, Մարի, Մուչան, Վարդան:

Այսպիսով՝ թեև մեր գրառած տեղանուններն ու անձնանունները կրում են տեղական խոսվածքներին հատուկ հնչարտասանական մակաշերտեր, ժամանակի ընթացքում ենթարկվել են թուրքերենի հնչյունական որոշակի ազդեցությանը, այնուհանդերձ, նրանցում պահպանվել են հայկական արմատներ, տեղանվանական և քերականական հատկանիշներ, որոնք կարևոր նյութ կարող են մատուցել հայ տեղանվանագիտությանն ու բարբառագիտությանը, լույս սփռել Չամշենի պատմության մի շարք խնդիրների պարզաբան վրա:

Ժողովրդական այս տեղանունները հայտնաբերվել են հիմնականում կարևոր մասն են կազմում, դրանք նաև ժողովրդի պատմական և ինքնության հիշողությունն են, որոնք չգրանցելու դեպքում սերնդափոխության հետևանքով և հատկապես թուրքական միջավայրում դատապարտված են մոռացության:

ՐԱՄՇԵՆՑԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ



2010թ. հուլիսին վերջապես հնարավորություն ունեցա լինել Թուրքիայի Արդվիմի և Ռիզեի նահանգներում: Արդվիմի նահանգի ծովափնյա հուփա քաղաքում, որտեղ բնակչության մի զգալի մասը կրոնափոխ, բայց հայախոս համայնք է, հանդիպեցի բանաստեղծ Յուսուֆ Վայիչին: Նրան ծանոթ էի համացանցից, երբեմն իրար համայնքի բարբառի հոսիայի խոսվածքով լատինատառ նամակներ էինք գրում:

Յուսուֆ Վայիչը ծնվել է 1961թ. հոսիայի գավառի Խիզոբա (Հիզոբա, այժմ՝ Բաշոբա) գյուղում: Մինչև դպրոց գնալը թուրքերեն չի իմացել, քանզի տանը և շրջապատում խոսել են հոսիայի խոսվածքով: Հինգ տարի սովորել է գյուղում, հետո տեղափոխվել Խոփա: Լիսեյում ուսումը կիսատ է թողել, որովհետև 1980թ. զինվորական հեղաշրջման ժամանակ ծախսակողմյաններին համակրելու մեղադրանքով 22 ամիս պահվել է Էրզրումի զինվորական բանտում: Որից հետո 20 ամիս ծառայել է բանակում: Ջորաջովելուց հետո մատուցող է եղել սրճարանում, աշխատել է Յոզղատի ջրամբարի շինարարությունում, Ադանայի և Բուրսի ճանապարհաշինական կազմակերպություններում: Ինչպես ինքն է ասում. «Ամբողջ տարիս ցեղանկարներ էր անում, դանդաղ բարձրացա»: Այսպես 6-7 տարի: Այնուհետև 15 տարի հոսիայում աշխատել է տրանսպորտի ոլորտում, իսկ հիմա՝ ռեստորաններից մեկում: 1992թ. ամուսնացել է, ունի երկու աղջիկ:

Նա արվեստի մարդ է, սիրում է սրինգ, պարկապզուկ, սազ նվագել, ասում է. «Ինձի հերթը չաք գավալ, թուլում, մեմալ սազ փեչի գում»: Բայց ամենակարևորն այն է, որ նա հոսիայի խոսվածքով լատինական տառերով գրում է բանաստեղծություններ, որոնցից երբեք սիրով թարգմանելով արդի արևելահայերեն, ներկայացնում ենք «Չայն համշենականի» ընթերցողներին:

Թարգմանության ընթացքում փորձել ենք հնարավորինս հարազատ մնալ բնագրին, բայց բանաստեղծի ասելիքը ընթերցողին հասցնելու համար նաև ստիպված ենք եղել խուսափել բառացի փոխադրությունից: Յուսուֆ Վայիչի ստեղծագործությունները մեսրոպատառ տպագրելով, զուգահեռ ներկայացնում ենք նաև մեր թարգմանությունները, ընթերցողին հնարավորություն տալով ծանոթանալու բնագրին և համեմատելու:

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԵՐԹԱՔ

Քալեցաք,
Գերթաք գամաց-գամաց,
Ձիյափ-ձիյափ, ցախուդ-ցախուդ,
Կիդիք՝ մեզի շադ հերու ա
Ձիյափե, ցախուդե,
Էսսեվ, մարթու բես տադուշ,
մարթու բես աբրուշ...
Մեք գերթաք,
Վե, փուք աա եղեփլեմուս,
Թա կուզես ծիծաղա, թա կուզես
լաց,
Թա կուզես, թուն ալ այե...
Մեք օլուքի քալ չիգայիք,
Թուն սիրդեդ բախ փերնա,
Փըրնեցաք իսա ջամփաս՝
երթող ուք գամաց-գամաց:
Կիդիք,
երգիքին աստադքնիյե համրեփիլ
չին,
Ադադիք տեժար մե փանիյես,
Օլուքի խելար ին՝ գասես մեզ
ամա,
Թուն ինչ ու գասես, ասա,
Մեք քալեցաք, գերթաք գամաց-
գամաց:
Կիդիք,
Շադ տեժար ա լուսնիկային
արչեթու մերալե յեդ էնուշե,
Ջար չկո, յեդ էնուշ ուք,
Չանա լուսնիկան թիրնու չի:
Ինչքես ու չախ էգուշե գունգնի
գու,
Աաքադե թիրնու գու,
Ինչքես ու ծմեռը թամնի, կաուն
կուքա,
Թորխ գենես, ձիլ կելլա,
Ինչքես ու քաղցենաս գու, քայիդեդ
հաց կուզա,
Ինչքես ու դադա գուննաք,
մեծեցեմի գուք,
Հարս գելիք, հարսնիք գընիք,
Ինչքես ու եդիսուդե մերնի գուք,
Աման ինչիմենա մե ուզածես:
Կիդիք մեմե մերնուշին ջար չկո,
Մեզալ էմեմին ջար գո,
Թուն կուզես թա, ան ասա,
Մեզալե ինքե գելլի,
Ցախուդան էգոլ քեդե՝ ձովե
կըդածին բես:
Մեզե քուրթ ա, մեզալե՝ ջան,
մեզալօքե
Համշեցի ին, գյուրջի ին,
Մեք ասու հային չիք:
Մեք մարթու դադ տընվուշ,
Մարթու բես աբրուշ կուզիք,
Իսա շա՞դ ավեր ուզուշ ա թա...

10.08.2005

ԳՆՈՒՄ ԵՆՔ

Քայլում ենք,
Գնում ենք կամաց-կամաց,
Շուկայից շուկա, անտառից
անտառ,
Գիտենք՝ մեզ համար շատ հեռու են
Շուկան, անտառը,
Երանի մարդու պես աշխատելուն,
մարդու պես ապրելուն...
Մենք գնում ենք,
Վեր կաց, նայի՛ր ետևներիցս,
Թե կուզես ծիծաղիր, թե կուզես
լացիր,
Թե կուզես, դու էլ արի...
Մենք գուցե չկարողանանք
վերադառնալ,
Դու սառնասիրտ եղիր,
Բռնեցիք այս ճանապարհը՝
Գնալու ենք կամաց-կամաց:
Գիտենք,
Երկնքի աստղերը համրել չի լինի,
Այդչափ դժվար է մեր գործը,
Գուցե մեր մասին ասում ես՝ խելառ
են,
Դու ինչ որ ասում ես, ասա,
Մենք քայլում ենք, գնում ենք
կամաց-կամաց:
Գիտենք,
Շատ դժվար է լուսնի առջևի ամպը
մի կողմ տանելը,
Շար չկա, մի կողմ ենք տանելու,
Թե չէ լուսինը չի ծագի:
Ինչպես որ անձրևը կտրվում է,
Արեգակն է ծագում,
Ինչպես որ ձմեռն ավարտվում է,
գարուն է գալիս,
Մերն ես ցանում, ծիլ է ելնում,
Ինչպես որ քաղցածանում ես,
ստամոքսդ հաց է ուզում,
Ինչպես որ երեխա ենք ունենում,
մեծացնում ենք,
Հարս ենք լինում, հարսանիք ենք
անում,
Ինչպես որ վերջում մեռնում ենք,
Այդպիսի մի բան է մեր ուզածը:
Գիտենք, միայն մեռնելուն ճար
չկա,
Մյուս ամեն ինչին ճար կա,
Դու ինչ ուզում ես, ասա,
Մնացածը ինքնիրեն կլինի
Անտառից եկող գետի՝ ծովը
գտնելուն պես:
Մեկը քուրդ է, մյուսը՝ լազ,
մյուսները
Համշենցի են, վրացի են,
Մենք սրան ուշադրություն չենք
դարձնում:
Մենք մարդու տեղ դրվել,
Մարդու պես ապրել ենք ուզում,
Սա շա՞տ վատ ցանկություն է...

ՄԵԳ ՕՐ ՄԵ

Արդեցուքով չիյեցաք
Մեք աշխարիս խօղիյե:
Մեզմեզ հադիգ ցանվեցաք
Լուսանող կիշերնիյե:

Աաքազին, աստադքնուն
Փուք էնելօլ քալօլ ուք,
Չախուն ու մերալուն
Թաթօլ ջօվճուր էլլօլ ուք:

Թորխ էնուշ ու դեմգօլ ուք:
Մերթուս մեչի վարե
Չադիգի բես ծաղօղ ա
Ան թորխե ձելած օրե:

Չելօլ ու մեծընօլ ուք,
Շիդազ աշխար շինօլ ուք,
Մեր նօր աշխարին մեչե
Տադօլ, էրանդ աբրօլ ուք:
05.11.2007

ՕՐԵՐԻՑ ՄԻ ՕՐ

Արտասուքով ջրեցիք
Մենք աշխարիս հողերը:
Մեկիկ- մեկիկ ցրվեցիք
Լուսացող գիշերներում:

Արեգակին, աստղերին
Նայելով քայլելու ենք,
Անձրևին ու մշուշին
Ամբողջովին թրջվելու ենք:

Ցանելու ու տնկելու ենք:
Սրտներիս միջի ցավը
Շաղկի պես ծաղկելու է
Այն ցանքսի ծլած օրը:

Ծլելու ու մեծանալու ենք,
Ճիշտ աշխարի ենք կառուցելու,
Մեր նոր աշխարհում
Աշխատելու, գեղեցիկ ապրելու ենք:



Տեսարան Խոփա քաղաքից, լուսանկարը՝ Ս. Վարդանյանի:

ԷԼԼԵ ՀԱՆԱ

Սարին կըլիսին վայի թուփ ձեվաղ էլլե,
Քուքա՞դ քաղել գուդեդի՞ թա թուն
ինձի:
Լերինե ջամփուն մեզ ծաղիգ մե էլլե,
Գերօջեդ ու հօդ գենե՞դ թա թուն ինձի:

Ջօրօղ ջամփուն վաան փօս քար մե
էլլե,
Վասա քալեդ նեն գասնե՞դ թա թուն
ինձի:
Դեփրին ջօթին էրգու ջիվ սախթօր
էլլե,
Հազ էնելօլ գուդեդի՞ թա թուն ինձի:

Հաքուս հաքած շիյիե ծեված էլլեն,
Հանել, գարեդ, հաքցենե՞գուդ թա
ինձի:
Ցուցին մեչե փաղեցած ջիմջուղ էլլե,
Ջամգեդ արնել շօղցենե՞գուդ թա
ինձի:

09.12.2007

ԵԹԵ ԼԻՆԵԻ

Սարի գլխին վայրի սև ծվաղ լինեի,
Կգայի՞ր քաղեիր, կուտեի՞ր դու ինձ:
Լեռան ճանապարհին մի ծաղիկ
լինեի,
Կկռանայիր ու հոտ կքաշեի՞ր դու
ինձանից:

Ցեխտտ ճանապարհի վրա մի հարթ
քար լինեի,
Դու ինձ վրա քայլելով կանցնեի՞ր:
Փոքր սեղանի եզրին սխտորի երկու
պճեղ լինեի,
Դու ինձ սիրելով կուտեի՞ր:

Հազածս շորերը ծվատված լինեին,
Հանեիր, կարեիր, կհագցնեի՞ր դու
ինձ:
Չյան մեչ փայտացած ճմճուկ
լինեի,
Բուռդ կառնեի՞ր, կտաքացնեի՞ր ինձ:

Ծվաղ-դափնեկեռաս

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Հարցախոյզ համշենցիներու մէջ (մարտ 10-22, 2010)

Այս համացանցային հարցախոյզը թրքաբնակ համշենցիներու մէջ, որու պատասխանները քաղեցի Մարտ 10էն մինչեւ Մարտ 22, 2010-ի, պատրաստեցի համշենցիներու մասին Մարտ 26-ի ներկայացումիս համար Նիւ Եորքի մէջ («Սէք Էրմէնի Չիք. ՍԵՐ ՀԱՍՇԵՆԱԴԱՅԱՅ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ»: Տես «Չայն Համշենցիներ», Մարտ-Ապրիլ 2010):

Ընդամենը 87 հոգի մասնակցեցաւ այս անանուն հարցախոյզին, եւ կէսէն պակաս քաղեցի համշենցի երկու ընկերոջ օգնութեամբ՝ Սէրտար Քըրչիչէք եւ Նեժտեթ Չաքմաք, որ իրենց ընկերներուն եւ հարազատներուն պատասխանները անձնապէս հաւաքեցին եւ ինձի զատէն ուղարկեցին: Այս գործը կարելի պիտի չըլլար առանց թանկագին օգնութեան Սերգէյ Վարդանեանի, Արտաշ Չիլիկիորոյլուի, Արիսի Չանքարի եւ Մուրատ Քուրբուի:

ԱԻԵՏԻՍ ՀԱՇԵՆԱՆ ՆԻՍ ԵՈՐՔ

Ժողովրդագրական տուեալներ

ՏԱՐԻՔ

Հարցախոյզին մասնակցողներուն մեծամասնութիւնը 18 եւ 34 տարեկանի միջեւ են:

Տարիք	Համեմատութիւն
A. 18-34	64.37
B. 35-44	18.39
C. 45-54	12.64
D. 55-65	4.60

ՍԵՆ

	Համեմատութիւն
A. Տղամարդ	60.92
B. Կին	39.08

ԾՆՆՂԱԿԱՅՐ ԵՒ ԲՆԱԿԱԿԱՅՐ

Ծննդավայր

Խոփա, Արտուիւն, Պորչքա, Քենալփաշա, Արհաի	Համեմատ.
70	80.45%
Պոլիս	8 9.19%
Ռիզէ, Արտեշէն-Արտաշէն, Ֆընտըքը	2 2.29%
Չայելի	1 1.14%
Իզմիթ	1 1.14%
Սամսոն	1 1.14%
Աքչաքոճա	1 1.14%
Պուրսա	1 1.14%
Տրապիզոն	1 1.14%
Անհասկնալի պատասխ.	1 1.14%

Բնակավայր

	Համեմատ.
Պոլիս	51 58.62%
Խոփա, Արտուիւն, Պորչքա	8 9.19%
Պուրսա	6 6.89%
Անգարա	4 4.59%
Սամսոն	3 3.44%
Քոճաէլի	3 3.44%
Ռիզէ, Ֆընտըքը, Ենիեօլ	2 2.29%
Իզմիթ	2 2.29%
Եալովա	1 1.14%
Չոնկուլտաք	1 1.14%
Էսկիշէհիր	1 1.14%
Իզմիթ	1 1.14%
Տէնիզլի	1 1.14%
Պալքըքեսիր	1 1.14%
Աքչաքոճա	1 1.14%
Անհասկնալի պատասխ.	1 1.14%

ԿՐԹՈՒԹԻՒՆ

Հարցախոյզի մասնակցողներու ջախջախիչ մեծամասնութիւնը (հարիւրէն 81-էն աւելի) համալսարանական է՝ ներկայիս ուսանող, համալսարանական ուսումը անաւարտ թողած կամ աւարտած:

	Համեմատութիւն
A. Երկրորդական ուսում աւարտած	18.39
B. Երկրորդական համալսարան յաճախող	35.63
C. Երկրորդական համալսարանի շրջանաւարտ	14.94
D. Քառամեայ համալսարանի ուսանող/շրջանաւարտ	26.44
E. Բարձրագոյն ուսումի ուսանող/շրջանաւարտ	4.60

(Վարպետութեան կամ վարդապետութեան աստիճան, անգլերէնով՝ Masters կամ Ph D)

ԼԵՁՈՒ

Նոյնպէս, ջախջախիչ մեծամասնութիւնը (հարիւրէն գրեթէ 93-ը) կ'ըսէ որ համշենցիներն են խօսի:

Համշենցիներն են խօսի՞ք:

	Համեմատ.
A. Այո	92.86
B. Ոչ	7.14

Ուշագրաւ է նկատել, որ թէեւ մեծամասնութիւնը լեզուն կը խօսի, զայն պայման չի նկատեր ինքնութիւնը պահպանելու համար:

Կարելի է՞ համշենցի մնալ, առանց համշենցիներէն խօսելու:

	Համեմատ.
A. Այո	42.53
B. Ոչ	33.33
C. Դժուար է, բայց կարելի	21.84
D. Թերեւս/Չեմ գիտեր	2.30



Տեսարան Քենալփաշա ավանից, լուսանկարը՝ Ա. Վարդանյանի:

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ

Հարցախոյզի մասնակցողներուն առաջարկուեցաւ, որ հետեւեալ հաստատումներէն ընտրէին ան որ ամենահարազատ կերպով նկարագրէր իրենց ազգային ինքնութիւնը:

Պատասխանողներէն միայն մէկ հոգի յայտնեց, որ ինքզինք բացարձակապէս թուրք կը նկատէր: Մնացեալ մասնակցողները զանազան համեմատական հաստատումներ ընտրեցին, որոշ հեռադրութիւն դնելով թրքական ինքնութենէն: Պատասխանները, փոխանակ որոշ չափով միօրինակ պատկեր մը ներկայացնելու-օրինակ՝ թրքացումի, գրեթէ հինգ դար վերջ համշենցիներու իսլամացումին առաջին ակիքէն-ազգային ինքնութեան բեկորացումի խճանկար մը կը ներկայացնեն, թերեւս նախանշան մը ազգային պատկանելիութեան տագնապի թրքաբնակ համշենցիներու մէջ (կամ, աւելի ճիշդ, երիտասարդութեան, քանի որ հարցախոյզը պատասխանողներուն 80 առ հարիւրէն աւելի 18-է մինչեւ 44 տարեկան են): Նման երեւոյթ հաստատուեցաւ կրօնական գետնի վրայ

(Տե՛ս Կրօնք բաժինը, այս նոյն վիճակագրութեան մէջ):

	Համեմատութիւն
A. Առաջ թուրք, վերջը համշենցի	14.94
B. Առաջ համշենցի, վերջը թուրք	9.20
C. Համշենցի, բայց թրքական	14.94
D. Երկուքն ալ նոյնքան կարեւոր են ինձի համար	16.09
E. Միայն մարդ արարած մըն են, ինքնութիւնս կարեւոր չէ	29.89
F. Միայն համշենցի են	10.34
G. Ուրիշ	4.60

Վերջին հաստատումը (Ուրիշ) ընտրողներուն պատասխաններն են.

Ա. Պատասխանը չեմ գիտեր: Հեմշինլի են, բայց միաժամանակ թրքական Հանրապետութեան քաղաքացի: Բայց թուրք են, հա՞յ են, չեմ գիտեր: Միայն գիտեմ որ համշենցի են:

Բ. Միայն թուրք են:

Գ. Չեմ կարծեր որ կարեւոր ըլլայ եթէ հեմշինլի են կամ թրքական Հանրապետութեան քաղաքացի, բայց նաեւ իրաւ է, որ հեմշինլի են եւ թրքական Հանրապետութեան քաղաքացի, որու հետեւանքով իրապաշտ հեմշինլի մըն են:

Դ. Առաջ մարդ, վերջը հեմշինլի, վերջը թուրք:

Ըստ Պոլսահայ քաղաքագետ Լեռնա Եանըքի, Անգարայի Բիլքենք Համալսարանի դասախօս, երրորդ հաստատումը (Համշենցի, բայց թրքական Հանրապետութեան քաղաքացի) կը գերադասէ թրքական Հանրապետութեան պատկանելիութիւնը: Եանըքի համաձայն, «բայց»ը հարցումին մէջ կ'արտայտէ այդ գերադասութիւնը: «Եթէ հարցումը ըլլար «Համշենցի եւ թրքական Հանրապետութեան քաղաքացի»

Ըստ Պոլսահայ քաղաքագետ Լեռնա Եանըքի, Անգարայի Բիլքենք Համալսարանի դասախօս, երրորդ հաստատումը (Համշենցի, բայց թրքական Հանրապետութեան քաղաքացի) կը գերադասէ թրքական Հանրապետութեան պատկանելիութիւնը: Եանըքի համաձայն, «բայց»ը հարցումին մէջ կ'արտայտէ այդ գերադասութիւնը: «Եթէ հարցումը ըլլար «Համշենցի եւ թրքական Հանրապետութեան քաղաքացի»

երկու ինքնութիւնները կարելի կ'ըլլար համագործակցել:

ԳՂՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՉՈՒԼՈՒՄ

Յաջորդ երկու հարցումներուն նպատակն է լուսաբանել զաղքականութեան եւ ծուլումի դրութիւնը համշենցիներու մէջ (մասնաւոր՝ երիտասարդներուն), որ վերջին տարիներուն նոր թափ ստացած է:

Կը կարծէ՞ք, որ այն համշենցի պոստիկները որ իրենց անանական հողերուն վրայ կը մեծնան եւ չեն հեռանար համշենցական գաղութէն աննպատ պայմաններու մէջ պիտի գտնեն իրենց զիրենց ապագայ արհեստավարժական ասպարէզին մէջ:

	Համեմատ.
A. Այո	47.13
B. Ոչ	43.68
C. Թերեւս/Չեմ գիտեր	9.20

Կարեւոր է՞, որ համշենցի մը համշենցիի հետ ամուսնանայ:

	Համեմատ.
A. Այո	32.18
B. Ոչ	56.32

C. Շատ պիտի փափաքէի, բայց պայմաններս չեն ներեր	6.90
D. Թերեւս/Չեմ գիտեր	0
E. Ուրիշ	4.60

Վերջին հաստատումը ընտրողներուն պատասխաններն են.

Ա. Հեմշինլիները իրենց մշակոյթը պէտք չէ մոռնան: Այսպէս ըսած, մշակոյթները պէտք է միանան:

Բ. Մասամբ այո (կարեւոր է, որ համշենցի մը համշենցիի հետ ամուսնանայ): Սովորութիւնները եւ լեզուն կը կորսուին:

Գ. Որեւէ վնաս չկայ օտարախօս մէկուն հետ ամուսնանալու մէջ: Մշակոյթներու փոխանակում կը նկատեն: Գէշ բան մը չեմ նկատեր...

Դ. Կարեւոր չէ, բայց եթէ ինքը համշենցի ըլլար աւելի առիթ պիտի ունենայի ծննդավայրս այցելելու:

ԿՐՕՆՔ

Հարցախոյզին կը բխի այն տպաւորութիւնը, որ պատասխանողներուն կրօնական պատկանելիութիւնը (այս պարագային Իսլամին, քանի որ բոլոր թրքաբնակ համշենցիները իսլամացած են) տկար է: Պատասխանողներու քառորդէն պակաս կրօնքը իրենց ազգային ինքնութեան կարեւոր մաս մը կը նկատեն: Արդիւնքները նաեւ կ'արտացոլեն յառաջացած ապակրօնացում հարցախոյզի մասնակցողներուն մէջ:

Կրօնքը կարեւոր մաս կը կազմէ՞ ձեր համշենցական ինքնութեան:

	Համեմատ.
A. Այո	24.14
B. Ոչ	31.03
C. Շատ կրօնատէր չեմ, բայց աւանդութիւնները կը նշեն	16.09
D. Շատ կրօնատէր չեմ եւ աւանդութիւնները չեմ նշեր	3.45
E. Կրօնք եւ ազգային ինքնութիւն կապ չունին	25.29

ՀԱՅՈՒԹԻՒՆ

Հետեւեալ հարցումներուն նպատակը միայն լուսաբանական չէր, այլ գիտնալու համար, իրենց դիրքորոշումը՝ ծայրայեղ հակահայ, կամ թրքամոլ: Խուսափեցանք կարգ մը վճռական հարցումներ ուղղելէ. օրինակ՝ Մեծ Եղեռնը, Հայաստանի թրքական շրջափակումը եւ ուրիշ նման բնոյթի նիւթեր, որոնք գրգռիչ կրնային ըլլալ կարգ մը մասնակցողներու համար, կամ զիրենք վախցնել, քանի որ նման հարցումներու պատասխանը կրնայ նոյնիսկ զիրենք թրքական քրեական օրէնքի նախատեսուած պատիժներուն ենթարկել:

Կը հաւատա՞ք այն տեսութեան, որ համշենցիները եւ իրենց լեզուն հայկական ծագում ունին:

	Համեմատ.
A. Այո	59.77
B. Ոչ	21.84
C. Ոչ, ծագումը թրքական է	4.60
D. Ոչ, ուրիշ ծագում ունի, ո'չ թրքական, ո'չ ալ հայկական	6.90
E. Թերեւս/Չեմ գիտեր	6.90

Եթէ համշենցիները կը խօսիք եւ հայախօս մէկուն հետ խօսած էք, ի՞նչ չափով զիրար հասկցած էք:

	Համեմատ.
A. Առանց դժուարութեան զիրար հասկցանք	8.11
B. Վեր ի վարոյ զիրար հասկցանք, բայց ես իր ըսածը աւելի հասկցայ	10.81
C. Վեր ի վարոյ զիրար հասկցանք, բայց ինքը զիս աւելի հասկցաւ	5.41
D. Վեր ի վարոյ զիրար հասկցանք, հիմնականը հասկցանք	27.03
E. Ընդհանրապէս զիրար չհասկցանք, բացի քանի մը բառերէ:	2.70
F. Բնաւ զիրար չհասկցանք	2.70
G. Երբեք հայու մը հետ չեմ խօսած	43.20

Շարունակութիւնը՝ 8-րդ էջում

Հայ եւ օտար գրականութիւնն ու պատմագրութիւնը բազմաթիւ օրինակներ ունեն եղեռնից անցած հայ կնոջ մասին, յիշատակումներ նրա անանձնական զոհաբերութեան եւ բարոյական բարձր սկզբունքների մասին, որպէս կին, որպէս մայր՝ նրա գերմարդկային կեցուածքի ու ընթացքի մասին: Այդ կանանցից ու աղջիկներից ոմանք այդպէս էլ զոհ գնացին անասելի տառապանքներին, չղիմացան սովին, ծարաւին, հիւանդութիւններին, ցրտին ու տաքին եւ դահիճների վայրագ վերաբերմունքին: Մեռան... Ու մենք այսօր ցաւով ու երկիրաւորութեամբ նրանց յիշատակն ենք խնկարկում: Իսկ ոմանք հրաշքով վերապրեցին, մի կերպ ազատ աշխարհ հա-

մար այս կանայք վաղուց մոռացուած ու մեզ համար անծանօթ մնացած մի մասնիկն են հայ կնոջ բազմազան, բազմերանգ ու բազմակողմանի հաւաքական կերպարի: Այնքան շատ են օրինակները եւ զարմանալիօրէն աւելի յաճախ թուրք մերօրեայ գրականութեան մէջ: Երրորդ սերունդի պատկանող թաքուն (ծպտեալ) հայ Սուլթանը յիշում է թէ իր հորաքոյրը ինչպէս յաճախ կրկնում էր լալազին. «Իմ աչքի առջեւ թուրքը անուսնուս սպանեց եւ ինձ պարտադրեց իր կինը դառնալ: Ես իմ կեանքը ազատելու համար ամուսնուս սպանողի կինը դարձայ: Երբեք չպիտի ներեմ այդ մարդուն իմ երկու զաւակների հօրը»: Երուանդ Օտեանը յիշում է բռնի կրօնափոխ կանանց հետ իր հանդիպումը քաղաքի ճամբարի մէջ. «Այդ բռնեքը ընդհանրապէս անեծքներ էին իրենց նոր ամուսիններուն ուղղուած»: Գրի-

խոր պատճառ: Դրսում արդէն մոռացուել էին նրանք, զուգէ մոյհիսկ մեռած էին սեպուս: Եթէ փախչէին, եթէ վերապրող մնացորդացին միանային, գաղտնիքը պիտի բացայայտուէր իր ամբողջ տօգելութեամբ բռնաբարում, ստորացում, նուաստացում, պարտադրուած կրօնափոխութիւն, անուսնական կապ, յետոյ զուգէ եւ աստիճանաբար սեր եւ կամաւոր սեռային կապ իսկան ամուսնու հետ: Աւելի լաւ չէ՞ր միայնակ տառապել ու գաղտնիքը գերեզման տանել: Գիտենք այսօր թէ թուրք ոճրագործները, որպէս ցեղասպանութեան հատու գործիք, իրենց գոհերից նախ խլեցին մարդկային բոլոր յատկութիւնները, նրանց անարժան արարածների վերածեցին. այդպէս, դրանց սպանելը աւելի դիրքին կլինէր: Այս նուաստացումներն ու ամօթանքի զգացումները ամենադժուարին արգելքներն էին, որոնց յարթահարելով միայն կարելի պիտի

կէ իր սեռային ախորժակը գոհացնող իր հիւանդ երեւակայութեան թելադրանքներին: Ճիշտ է, սեռային անյազուրդ բնագործ կար. բայց կար նաեւ վերից եկած կարգադրութիւնը՝ հայ կանանց եւ մանր երեխաներին իսկան տներում տեղաւորելու: Եւ դա Յենրի Մորգենթաուի կարծիքով ցեղային բարեփոխում էր առաջադրում. «Հայի արիւնը թուրք ժողովրդին խառնելը գեներալ մեծ նշանակութիւն պիտի ունենար ամբողջ վրայ»: Օսման Բօքերը փաստագրական հիմքերով եզրակացնում է, թէ հայ կանանց ու երեխաներին իսկան ընտանիքների մէջ առնելն ու նրանց կրօնափոխելը վերից եկած հրաման էր նաեւ: Ճիշտ է՝ պարտադրուած կրօնափոխութիւնը ցեղասպանութեան մէկ միջոցն էր, սակայն այն, ինչ որ ցեղասպանները չէին նախատեսել, պատմական յիշողութեան գոյատեւումն էր: Այդ մէկը ջնջել չկարողացան:

Հարտելը: Թուրք պատմագրութիւնը, գրականութիւնն ու մամուլը երկար ժամանակ լուռ մնացին եւ չանդրադարձան իսկան հարեմներում տուայտող հայ կանանց կեանքի պատմութեանը: Դրութիւնը փոխուած է: Հրանտ Դինքը համարձակութիւնն ունեցաւ քաջարելելու հայ ծագում ունեցող անհատներին բացայայտել գաղտնիքը եւ տէր կանգնել իրենց իրական ինքնութեանը: Հրանտ Դինքը տեսնում էր խառնածինների հսկայ թիւը, տեսնում էր թրքութեան հասկացութեան փլուզումը եւ ինքնութեան տագնապը Թուրքիայում. «Ժամանակի ոգին է», գրում էր. «Այսօր շատերն են դեգերում իրենց ինքնութեան լաբիրինթոսում»: Ժամանակի ոգին է պարտադրել Այշեգիլ Ալքընային ու Ֆեթիհե Զեթինին՝ հաւաքել աւելի քան 200 խառնածինների պատմութիւն ու հրատարակել «Թռուկալար» («Թռուները», 2010) հաւա-

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ
Բանասիրութեան դոկտոր,
Կալիֆորնիա

ԲՈՒՆԻ ԻՍԼԱՄԱՑՈՒԱԾ ՀԱՅՈՒՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ. ՆՐԱ ԹՈՂԱԾ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԱՅՍՕՐ

սան, նոր կեանքի մէջ մտան ու ընտանիքներ կազմեցին: Դրանք մեր մայրերն են, մեծ մայրերը, որ այսօր այլեւս չկան: Կենդանի նահատակների այդ սերունդը անցել է արդէն՝ մեզ թողնելով իր եղերական յուշերը ու իր պատգամը չմոռանալ, չներել:




Կրօնափոխութիւնը վարագութեամբ պարտադրուեց ցեղասպանութեան տարիներին: Հետագայում, սակայն, կարծես նացիական գաղափարախօսութեան ազդեցութեան տակ ծուլումի քաղաքականութիւնը փոխուեց: Արհամարհանք դէպի հայը եւ, ընդհանրապէս, այլ ազգը դարձաւ թուրք հասարակութեան վարքագիծը: Ֆեթիհե Զեթինը վկայում է, թէ թուրքերը խուսափում էին ամուսնական կապ հաստատել այն ընտանիքների հետ, որոնց մէջ հայի արիւն կար: Նման ընտանիքների երկրորդ-երրորդ սերունդ-

քածին: Ժամանակի ոգին է, որ մղեց ենի Աքթուէլ թերթին 2007-ին հրատարակելու մի ամբողջ շարք հայի արիւն ունեցողների խոստովանութիւններ: Բացայայտումները միշտ էլ դրական արդիւնքների չեն հասնում: Մեծ է թիւը այն անհատների, որոնք իրենց հայ արմատները ուրանալու փոքրով միանգամայն հակառակ դիրք են բռնում ու հայութեան թշնամի դառնում: Վերջերս էլ Դոդու Փերինչեքը Շուկեարիայում դատաւարտուեց բացէ ի բաց Յայոց Ցեղասպանութեան իրողութիւնը ժխտելու համար: Նրա մեծ մայրը հայ էր:

Ինչ որ ուսումնասիրման կամ յիշատակման չի արժանացել, դա այն կինն է կամ դեռատի աղջիկը, որ առեւանգուել է, կամ մի քանի դրուշով ստրուկների շուկայից գնուել կամ թուրքի ու քուրդի միջոցով նախճիրից «ազատուել» ու տուն է տարուել: Ջարդ ու սպանդից ֆիզիքապէս փրկուած այդ կինը կարողացել է արդեօք բնական կեանք վարել, թուրքի ու քուրդի կին դառնալ, նրանից յղացած երեխաներին ծնել ու մեծացնել ու չիչել թէ դրանք մարդասպանի սերունդ են: Տաս-տասներկու տարեկանում շարունակական սեռային կեանքի պարտադրուած հայ աղջիկը ինչպէ՞ս է կարողացել այդ ահռելի փորձառութեան հետ համակերպուել: Այդ հայ կանայք ինչպէ՞ս են կարողացել մոռանալ իրենց ինքնութիւնը, անգամ անունը ու դաւանանքը, սերնդէտերունդ իրենց փոխանցուած աւանդութիւնները, աղօթքները, հայի Աստուածը ու դաւանել Ալլահին. հենց այն Ալլահին, որին աղօթելով, նրանից ուժ ու քաջալերանք յայցելով էր թուրքը հային կոտորում: Եղեռնից անցած եւ իսկան ընտանիքներում իրենց կեանքը շարունակող հայ կնոջ մասին է խօսքս: Ի՞նչ գիտենք նրանց մասին: Զէ՞ որ դրանք էլ հայ էին եւ հայ մնացին: Ինձ հա-

գորիս Պալաքեանը իր արտորի ճամբին յիշում է բռնի կրօնափոխ կանանց, որոնք, իրենց կեանքը վտանգելով, գաղտնի ուտելիք էին հասցնում քսորեակների կարաւաններին: Սետրակ Բաղդոյեանը գրում է Սիրունի մասին՝ իր անուան պէս գեղեցիկ մի աղջիկ: Նա համաձայնուել էր կարաւանի հրամանատար թուրք Իպոչ Պեյի հետ գնալ, եթէ նա ընդունէր իր հետ տանել նաեւ Սիրունի պզտիկ եղբորը եւ ընտանիքի մնացորդացին: Բաղդոյեանը չի հաւատում, թէ Սիրունը կարող էր կրօնափոխ դառնալ: Կրօնափոխ եղա՞ւ: Թուրքի հարձը, կինը, կամ սիրուհին դարձա՞ւ: Երեխաներ ծնե՞ց:



Սեհեր/Հրանուշը՝ Ֆեթիհե Զեթինի մեծ մայրը, առիթն ունէր Ամերիկա գալու եւ իր ընտանիքին միանալու. բայց նախընտրեց մնալ ու հաւատարմօրէն ծառայել իր ամուսնուն ու զաւակներին: Պատերազմից յետոյ շատերին այսպիսի առիթներ ներկայացուեցին, բայց քչերը ընդառաջեցին: Ի՞նչ էր պատճառը, անասիման սեր ու զոհաբերութիւն դէպի իրենց միս ու արիւն երեխաները. թէ՞ դրսում սպասող անորոշ ճակատագրի սարսափ: Կան գուցէ մի աւելի

լինէր մարդկային հասարակութեան վերադառնալ ու որպէս սովորական մարդ ապրել: Շատերին չյաջողուեց: Գիտենք այսօր նաեւ, թէ բռնաբարութիւնն ու սեռային ոտնձգութիւնը, երկարատեւ սեռային կեանքի պարտադրանքը որքան տարածուած երեւոյթներ էին ցեղասպանութեան տարիներին: Դրա պատճառն այն չէր միայն, որ տեղահանութիւններից ու քարոզից առաջացած իրավիճակը թուրքին ու քուրդին ազատութիւն էր տուել մինչ այդ արգիլուած ու անհասանելի պտուղ համարուող հայ կնոջը ենթա-

բացումը: Իշխանութեան տագնապ է ապրում: Իշխանութեանը չեն կարող այլեւս թուրք հասարակութեան միատարրութեան վրայ պնդել: Թուրք քաղաքացու բնութագրումը ազգութեամբ թուրք, կրօնով իսկան, կատակ է՝ համեմատութիւն երկրի բազմազգ ու բազմակրօն հասարակութեան:

Շարժումը սկսուած է ներսից: Հայ կանայք այսօրուայ հազարաւոր թուրք քաղաքացիների հայ մեծ մայրերը, կատարել են իրենց դերը: Որոշ պարագաներում տառապագին լուրթեամբ, այլ պարագաներում ընտանիքի մի վստահուած անդամին պահ տալով իրենց յուշերը մանրամասնութեամբ, փոխանցել են կատարուած ցեղասպանութեան իրողութիւնը: Հրաբուխը պայթել է եւ աւելի ուժգնութեամբ պիտի հոսի, երբ երկիրը աւելի մօտենայ ժողովրդավարութեան: Հայոց Ցեղասպանութեան եւ թուրք վայրագութիւնների այս դժբախտ «զոհերը» կարծես կենդանացել են այսօր թրքութեան հասկացութեան եւ թուրք ազգային ինքնութեան հիմները շարժելու:

Աղբյուրները
Ռուբինա Փիրումեան, And Those Who Continued Living in Turkey after 1915 (2008),
Ռուբինա Մելքոնեան, «Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանութեան տարիներին» (2010):

СМЕШАННЫЕ БРАКИ АРМЯН КРАСНОДАРСКОГО КРАЯ:

Причины, следствия и влияние на национальную идентичность

ТИГРАН ТАВАДЬЯН
Главный редактор
газеты "Еркрамас"
г. Краснодар

Армянство Краснодарского края, имея давнюю историю и значительную численность, складывалось из нескольких основных переселенческих потоков, в связи с чем характеризуется неоднородностью по своим качественным показателям в области национальной самоидентификации. Доля смешанных браков, причины вступления в смешанные браки и следствия, влияющие на сохранение армянской национальной идентичности, также отличаются в зависимости от того, какую группу армянского населения мы рассматриваем.

В нашей работе мы рассматриваем фактор смешанных браков в трех основных группах армянского населения:

1. Потомки армян переселенцев из Западной Армении, покинувших Родину после Геноцидов во второй половине XIX века и начале XX века.

2. Армяне, вынужденные переселенцы и беженцы конца XX века (погромы в Азербайджане, землетрясение в Армении, войны в Карабахе и Абхазии)

3. Армяне - экономические переселенцы.

Работа подготовлена на основе исследования, проведенного Центром этнополитологических исследований в 2009 году на территории Краснодарского края во всех вышеперечисленных группах на основании анкетирования подписчиков газеты армян России "Еркрамас" и активистов армянских общественных организаций.

Отметим, что опросов по национальному составу армянских семей в Краснодарском крае, проведенных кем-либо ранее, нам найти не удалось. Не проводилось сбора подобных данных и во время всероссийских переписей. Наиболее полные данные по этому вопросу можно получить, проводя соответствующую работу в архивах ЗАГСов, однако, армянской общественной организации получить такое разрешение практически не возможно, в связи с чем мы и опираемся на данные собственного анкетирования.

Анкетирование было проведено среди подписчиков газеты "Еркрамас". Всего было разослано 1000 анкет подписчикам в городах: Краснодар, Туапсе, Сочи, Армавир, Апшеронск, Горячий Ключ, Кореновск, Ейск, Анапа, Новороссийск, Славянск-на-Кубани, Геленджик, Курганинск. Получено было 264 заполненных анкеты. Сразу же отметим, что приводимые нами данные, получены от, так называемой "нацио-

нально активной" части армянского населения, выписывающей армянскую газету или участвующей в деятельности армянских организаций. Большая часть армянского населения Краснодарского края к этой категории не относится и результаты опроса с учетом этих людей могут сильно отличаться от приведенных нами.

Итак, прежде всего анкетирование показало, что наибольшая доля смешанных семей наблюдается в первой из рассматриваемых групп - потомках армян - переселенцев из Западной Армении. Этот показатель достигает 33% для семей, где муж - армянин, а жена иной национальности и 10% для семей, где жена - армянка, а муж иной национальности. Всего 43% от числа опрошенных (таблица 1).

Доля смешанных семей

Потомки армян переселенцев из Западной Армении, покинувших Родину после Геноцидов 1896 и 1915-1922 годов. (112 чел.)

Муж-армянин - 33% (37 чел.)
Жена-армянка - 10% (11 чел.)
Мононациональный брак - 57% (64 чел.)

Армяне, вынужденные переселенцы и беженцы конца XX века (погромы в Азербайджане, землетрясение в Армении, войны в Карабахе и Абхазии). (92 чел.)

Муж-армянин - 22% (20 чел.)
Жена-армянка - 18% (17 чел.)
Мононациональный брак - 60% (55 чел.)

Армяне - экономические переселенцы. (60 чел.)

Муж- армянин- 18% (11 чел.)
Жена- армянка- 13% (8 чел.)
Мононациональный брак - 69% (41 чел.)

В наших анкетах также предлагалось дать ответ о причинах вступления в смешанный брак. После обработки и систематизации ответов, выяснилось, что если для группы потомков переселенцев из Западной Армении главной причиной значатся человеческие качества партнера (красота, доброта, порядочность и т.д.), то для второй и третьей групп на первое место выходит расчет (карьерный рост, материальное благополучие, решение жилищной проблемы, совместный бизнес и т. д.) (таблица 2).

Причины смешанных браков

Потомки армян переселенцев из Западной Армении, покинувших Родину после Геноцидов 1896 и 1915-1922 годов. (48 чел.)

Человеческие качества (красота, доброта, порядочность и т.д.) - 43% (21 чел.)

Любовь - 34% (16 чел.)

Расчет (карьерный рост, материальное благополучие) - 20% (10 чел.)

Обстоятельства - 3% (1 чел.)

Армяне, вынужденные переселенцы и беженцы конца XX века (погромы в Азербайджане, землетрясение в Армении, войны в Карабахе и Абхазии). (37 чел.)

Расчет (карьерный рост, материальное благополучие, жилищная проблема) - 44% (16 чел.)

Человеческие качества (красота, доброта, порядочность и т.д.) - 27% (10 чел.)

Любовь - 27% (10 чел.)

Обстоятельства - 3% (1 чел.)

Армяне - экономические переселенцы. (19 чел.)

Расчет (карьерный рост, материальное благополучие, жилищная проблема, совместный бизнес) - 51% (10 чел.)

Человеческие качества (красота, доброта, порядочность и т.д.) - 20% (4 чел.)

Любовь - 18% (3 чел.)

Обстоятельства- 11% (2 чел.)

Подобная ситуация в условиях многонационального состава Краснодарского края и различных факторов, том числе и создаваемых искусственно, говорит о том, что доля смешанных браков в армянской диаспоре Краснодарского края будет увеличиваться. И если в условиях Армении, где население практически мононационально, а представители других народов расселены дисперсно, носителями этнической традиции в смешанных семьях остаются армяне, то в условиях Диаспоры, в частности Краснодарского края, по большей части этого не происходит. Дети от смешанных браков, как правило, не владеют родным языком, не знакомы с армянской культурой и историей, и, самое главное, при определении своего этнического самосознания, они, исходя из практических соображений, выбирают русскую составляющую, в том числе меняют армянскую фамилию на русскую. У детей от смешанных браков (русско-армянских) преобладающим выбором оказывается именно русская национальная идентификация как более престижная, выгодная.

Одним из способствующих увеличению количества смешанных браков факторов, является значительное число армян, вступивших в смешанный брак, среди руководителей и активистов армянских организаций Краснодарского края. Представлю данные, собранные корреспондентами газеты "Еркрамас" в ходе опросов у руководителей (председатели и члены правлений) и активистов армянских организаций в городах: Краснодар, Сочи, Апшеронск, Туапсе. Согласно этим данным 35% из сотни опрошен-

ных, так или иначе, имеет непосредственное отношение к смешанным семьям, и, как правило, не считает факт смешанной семьи опасным для сохранения национальной идентичности (таблица 3). Более того, один из руководителей армянской общественной организации публично приветствовал факт изменения армянской фамилии на русскую, из карьерных соображений, у студента, родители которого армянин и русская. Зачастую, подобными руководителями армянских организаций, в качестве примера для молодежи, называются имена известных армян, состоящих в смешанном браке и добившихся выдающихся успехов в экономике (например Ара Абрамян), культуре (Армен Джигарханян), политике (Артур Чилингаров) и других сферах (таблица 3).

Доля смешанных браков в руководящих структурах и активистов армянских организаций (100 чел.)

Состоят в смешанном браке - 22%

Являются детьми от смешанных браков - 10%

Являются детьми от смешанных браков и сами состоят в смешанном браке - 3%

Состоят в мононациональном браке - 65%

Своеобразная пропаганда смешанных браков идет и из Армении, на спутниковых телеканалах которой периодически демонстрируются фильмы, романтизирующие межнациональные браки, например "Невеста с севера" или "Моя большая армянская свадьба".

Этим процессам способствует проводимая в России на государственном уровне политика становления российской общегражданской идентичности, которая заключается в запуске механизмов ассимиляции и межкультурной интеграции. Это, в том числе, ассимиляция на индивидуально-семейном уровне - пропаганда толерантного отношения к смешанным бракам, содействие межнациональному общению, противодействие формированию замкнутых этнических сообществ (этнических кварталов, поселков, ячеек в сфере образования, труда и т. д.), развитие других каналов межкультурного общения.

Серьезным фактором, способствующим вступлению армян в смешанные браки, является почти полное отсутствие в Краснодарском крае армянских школ. Единственная армянская школа, действующая в Сочи, большого влияния на процессы не оказывает. Дети, обучаясь в обычной русской школе, узнают из школьных учебников по истории или ли-

тературе о самых разных народах России и мира, но о родном народе ничего не находят. Ничего не сказано об армянах и в учебниках по "Кубановедению"- предмете, введенном в курс обучения сравнительно недавно. Все это, в совокупности с антикавказскими настроениями, имеющими место в России в целом и в Краснодарском крае в частности, формирует у детей комплекс неполноценности по отношению к собственному народу. Еще одним "ударом" для школьников армян станет новый предмет, вводимый в России. Это, на выбор для школьника или администрации школы один из следующих предметов - "Основы Православия", "Основы Ислама", "Основы Иудаизма" или "Основы мировых религий". Как мы видим, среди этого перечня нет предмета "Основы Армянской Церкви", что в очередной раз укажет школьнику на "не престижность" принадлежности к армянскому народу.

Ощущение связи со своим народом воспитывается в процессе общения в семье, в школе, в кругу родственников и соседей той же национальности. Именно через круги подобного общения происходит передача элементов национальной культуры, служащих базой формирования национального самосознания. И от того, насколько внутриаэтнические круги общения значимы для того или иного нашего соотечественника, зависит и количество смешанных браков.

Тема "смешанных браков" достаточно тонкая и щепетильная, поэтому попытки воздействовать на нее путем прямой пропаганды и прямой разъяснительной работы в лучшем случае могут не принести необходимого эффекта, а в худшем случае могут обидеть наших соотечественников, состоящих в смешанном браке, но при этом осознающих свою армянскую идентичность и прививающих ее своим детям. По нашему мнению, нужно исходить из того, что смешанные браки являются следствием других негативных процессов, таких как отстраненность армян в Диаспоре от национального образования и национальной культуры. В связи с этим, попытки бороться с повышением количества смешанных браков в условиях Диаспоры будут напоминать борьбу Дон Кихота с ветряными мельницами до тех пор, пока в Диаспоре не будут созданы условия для изучения детьми и взрослыми родного языка и истории, для получения ими возможности общения с соотечественниками.

"Сохранение качеств армянской идентичности в смешанных браках", сборник докладов, Ереван, 2010г.

Սկիզբը՝ 2010թ. N 5-6, 7-8-ում:

Տրապիզոնի և նահանգի քայքայված տնտեսության հետևանքով զգացվում էր առաջին անհրաժեշտության պարագաների սուր կարիք: Այդ իսկ պատճառով, Տրապիզոնի կոմիտեի անդամներին տրվող աշխատավարձը անբավարար էր: Այսպես, 1917թ. ապրիլի 10-ից Հայկական կոմիտեի անդամների համար սահմանվում է ամսական հետևյալ աշխատավարձը՝ նախագահ Արշակ Առաքելյանին՝ 300 ռուբլի, անդամներին՝ Ներսես Դավթյանին՝ 130 ռուբլի, հաջիկ Այտընյանին՝ 125, իսկ Խոսրով Արզույանին՝ 60 ռուբլի: Փաստորեն կոմիտեի անդամներին մեկ ամսվա համար տրվում է 615 ռուբլի գումար⁷⁷: Հաշվի առնելով առկա ծանր վիճակը, նշված գումար խիստ անբավարար էր կոմիտեի անդամների նորմալ գործունեության համար, քանի որ գներն օրեցօր աճում էին և ռուբլին խիստ

դարձնում էր անօգուտ⁷⁸: Սակայն Կովկասյան ռազմաճակատի քայքայումը հանգեցնում է նրան, որ զորամասերը սկսում են հեռանալ ռազմաճակատից: Տրապիզոնում տեղակայված զանազան հաստատություններ, որոնք իրենց գործունեության համար գույք էին վերցրել Տրապիզոնի հայկական կոմիտեից, սկսում են վերադարձնել ստացվածը⁸⁴: 1918թ. հունվարի 19-ին Մ. ավագ քահանա Մելյանը պահանջում է Հայկական կոմիտեից ներկայացնել հաշվետվություն վաճառված ծխախոտից ստացված գումարների մասին⁸⁵: Իսկ հունվարի 13-ի նամակում Տեր հայրը հանդիմանում է կոմիտեին, որ «չի հոգացել փրկելու ազգային մտաւոր հարստութիւնը-գրադարանը ու այս պատճառով գրադարանի գրքերը գոհ են գնացել բաւական թւով դարձական շէնքում բնակած զինուորների կողմից»⁸⁶: Տրապիզոնը հետաքրքրում է նաև ամե-

րենակիցները, արտաքին թելադրութիւններու հետևելով, վնասակար և խաղաղութիւնը վրդովող գաղափարներ կը սնուցանեն և այս կերպով թէ իրենց հանգստութիւնը և թէ օսմանեան հայրենիքին իրենց միւս հայրենակիցներուն գոյութիւնն ու հանգստութիւնը կը խանգարեն և արիւն-հեղութեանց պատճառ ըլլալ կը համարձակին: Նոյնիսկ հայ ժողովրդին գոյութեանը և այժմ մեր կառավարութեանը հետ պատերազմող թշնամուն աջակցելու կը յանդգնին: Ուստի թէ երկրին պաշտպանութիւնն և խաղաղութիւնը պահպանելու համար մեր կառավարութիւնն արտակարգ միջոցներ և զոհողութիւններ ստանձնելով, մինչև պատերազմին վախճանը բնակելու համար ներքին զավառներու մէջ կառավարութեան նշանակած վարչերը փոխադրել որոշած է և բոլոր օսման-ցիներուն վճռականապէս հետագայ յայտարարութիւնը կ'ընէ, որուն պարտաւոր են կետառկէտ հնազանդի բոլոր օսման-

պատրաստուած են և ունէ յարձակումի ենթակայ չ'ըլլալու և ողջ-առողջ իրենց առժամանակեայ բնակավայրը հասնելու համար ամեն կերպ կարգադրութիւններ կատարուած են: 4. Հայ ժողովուրդէն մէկին կամ մէկ քանիներուն վրայ յարձակում ընողներուն դէմ պահակներուն կողմէ զէնք պիտի գործածուի և ողջ ձերբակալելով զինուորական ատեսանին առջև պիտի դատուի և գլխատուի: Հայերուն երևակայական գաղափարներով առաջնորդելուն հետևանքն եղող այս կարգադրութիւնը ուրիշ ունէ ժողովուրդի հետ կապ կամ առնչութիւն չունենալով՝ բնակչութեան միւս տարրերը ունէ կերպով չ'պիտի միջամտեն այս գործին: 5. Հայերը պարտ են հնազանդի կառավարութեան այս հրամանին և եթէ ունէ հայ ոստիկան զինուորներուն վրայ զէնք գործածել՝ անմիջապէս ժանդարմները զէնքի պիտի դիմեն և զէնք գործածողները միայն

ՌՈՒԲԵՆ ՍԱՐԱԿՅԱՆ պատմական գիտ. թեկնածու

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1916-1917թթ.)

արժեզրկվել էր:

1917թ. օգոստոսին կայացած Տրապիզոնի քաղաքային մարմնի ընտրություններում ընտրվում են յոթ հայեր⁷⁶: Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր և Տրապիզոնի հայկական կոմիտեի նախագահ Արշակ Առաքելյանը հայտնում է, որ հոկտեմբերի 27-ին Կարինից քաղաք են փոխադրվել բռնազաղթից փրկված 54 հայ կին և երեխա, «որոնք Տրապիզոնի շրջակայքի գիւղերի բնակիչներից են. այդ գաղթականներին Կարինից փոխադրել է կոմիտեի (Տրապիզոնի հայկական կոմիտեի- Ռ. Ս.) նախկին անդամ պ. Օդաբաշեանը»⁷⁹:

Միաժամանակ հաջողվում է Տրապիզոնի ռուսական իշխանություններից ստանալ հայերի լքյալ գույքը՝ այգիները, հողը, դրանք և այլն տնօրինելու իրավունքը:

Սեպտեմբերի 27-ին, 18 հայեր, երկարատև դեգերումներից հետո կարողանում են մոտենալ ռուսական առաջապահ դիրքերին: Ռուսները սխալմամբ նրանց համարում են լրտեսներ: Տրապիզոնի ամրացրած շրջանի պետ, գնդապետ Սմիռնովը նրանց հարցաքննելուց հետո պարզում է իրականությունը և ուղարկում Թիֆլիս: Քանի որ հայերը թուրքահպատակ էին, նրանց համարում են ռազմագերի: Իսկ դա նշանակում է, որ նրանց ուղարկելու են Սիբիր: Հայերին նշված վտանգից ազատելու համար հատուկ դիմում է արվում Մ. Պապաջանովին (Պապաջանյան)⁸⁰:

1917թ. հոկտեմբերի 15-ին Մ. ավագ քահանա Մելյանը հայտնում է Հայկական կոմիտեին, որ Անդրկովկասյան հատուկ կոմիտեն հոկտեմբերի 10-ին հրամայել է «Ռեժի» ընկերությանը հայերին պատկանող ծխախոտը հանձնել իրեն, որպես Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ⁸¹:

1917թ. նոյեմբերին Կովկասյան ռազմաճակատի ռազմածովային ուժերի կոմիսարի օգնական (տեղակալ) Պարույր Լևոնյանը* դիմում է Սև ծովի ռուսական նավահանգիստների պետ Ֆեդորովիչին, պահանջելով շտապ նավեր տրամադրել թուրքական առափնյա շրջաններում թաքնվող հայ փախստականներին: Պ. Լևոնյանը հայտնում է, որ նշված խնդրի լուծման համար կաջակցի Կովկասյան ռազմաճակատի Պրիմորսկյան շրջանի հետախուզության պետը⁸²:

1917թ. նոյեմբերի 8-ին Մ. ավագ քահանա Մելյանը դիմում է Մ. Պապաջանովին, խնդրելով միջամտել, որպեսզի զինվորականները վերադարձնեն իրենց կողմից օգտագործվող Տրապիզոնի հայկական



րիկացիներին: Նրանք նախապատրաստվում են այստեղ զգալի գումարներ ներդնել, ինչպես օրինակ նավահանգստի ընդլայնման համար: Միաժամանակ ակտիվանում է հույն բնակչությունը, որը փորձում է տեղում ինքնավարություն կազմակերպել⁸⁷:

Ցավոք, 1918թ. փետրվարին սկսված թուրքական հարձակումը հնարավորություն չտվեց իրականացնել նախատեսված ծրագրերը: Անհանգստացած թշնամու լայնածավալ հարձակումից, փետրվարի 13-ի գործընդունում Մ. ավագ քահանա Մելյանը տագնապով հայտնում է կոմիտեի անդամներին, որ «Տրապիզոնը կանգնած է մեծ վտանգի առաջ»: Նա խնդրում է շտապ Բաթում ուղարկել արժեքավոր իրերը⁸⁸: Փրկված և հարազատ օջախները վերադարձած տրապիզոնցի հայերը ստիպված էին կրկին ապաստանել Ռուսաստանում:

ցիները: 1. Ներկա յայտարարութեանս թուականէն հինգ օր վերջը առհասարակ բոլոր հայերը, ի բացառեալ հիւանդները, թաղերու և գիւղերու բաժանումներով պարտաւոր են մեկնել ժանդարմներու պաշտպանութեան տակ:

2. Մեկնելու ժամանակ իրենց շարժուն գոյքերն միասին առնել թոյլատրուած են, բայց աւելորդ գոյքեր, անշարժ կալուածներ ծախել կամ ուրիշներու յանձնելն արգելուած է: Որովհետև տեղափոխութիւնը ժամանակաւոր ըլլալուն պատճառաւ, այն բոլոր գոյքերը, որ պիտի թողուին՝ պիտի կապուին և հակեր շինուած հաստատուն շէնքերու մէջ պիտի ամփոփուին և անշարժ կալուածներով միասին պիտի պահպանուին ու երբ վերադառնան՝ դարձեալ, նոյնութեամբ իրենց պիտի վերադարձուին: Ամեն անոնք, որ հակառակ այս հրամանին, զենք, ծախսեն և պահեն՝ զինուորական ատեսանի առաջ պիտի դրկուին:

մեռեալ ձեռք պիտի ձգեն: Դարձեալ, կառավարութեան հրամանին չը հնազանդող, տեղափոխութենէն խուսափող և այս ու այն կողմն պահուողները, պահողները, կերակրողները և անոնց պահուիլն ապահովողները կախաղան բարձարցնելու համար զինուորական ատեսանին առջև պիտի դրկուին:

5. Հայերը զէնք կամ ռուսը կտրելու [կրելու] ասարտուած չ'ըլլալով՝ իրենց բնակարաններու մէջ կամ դուրսը պահած ամեն տեսակ զէնք, ատրճանակ, ռուսը և երկսայրի սուրեր պէտք է կառավարութեան յանձնեն: Այս տեսակ զէնքերու մէկ մասին վրայ կառավարութեան տեղեկութիւն արուած ըլլալով՝ ամեն անոնք որ նախապէս ծածկելու գաղափարով, չեն յանձնել և յետոյ կառավարութեան միջոցաւ երևան կը հանուին՝ խիստ պատասխանատուութեան տակ պիտի մնան և պատժուին:

7. Ճանապարհին հայերը կողոպտելու, սպաննելու և այլ և այլ նպատակներու համար անոնց վրայ յարձակողներուն դէմ ժանդարմները ու զինուորները պարտաւոր են և արտոնուած զէնք գործածելու այդպիսի անձնաւորութիւնները սպանել:

8. Օսմանեան պանքային պարտք ունեցողները իրենց պարտուց փոխարէն կրնան ապրանքները յանձնել պանքային պահեստանոցին, միայ կառավարութիւնն իրաւունք ունի զնել զինուորական պիտոյից գործածութեան համար այդ բոլոր ապրանքները, պանքային վճարելով պարտուց գումարը, որուն փոխարէն ապրանքները յանձնուած են: Ուրիշ անձանց եղած պարտքին փոխարէն ևս կարելի է ապրանքներ յանձնել, միայ թէ պարտուց խկութիւնն պէտք է կառավարութեան միջոցով հաստատուի, այս նպատակին համար վաճառականին վաւերացուած տետրակները առաջնակարգ փաստեր կը կազմեն: 9. Մեծ և փոքր կենդանիները, զորս փոխադրել կարելի չէ, կառավարութիւնը պիտի գնէ:

10. Ճանապարհին վրայ գտնուող գիւղերու, քաղաքներու կառավարութիւններու և նահանգներու պաշտօնեաները կարելի եղած օգնութիւնը պիտի մատուցանեն հայ ժողովուրդին:

II.

Ռուսական վայրագութիւններ Ցաւալի էջեր

Յոյներու և հայերու առաջարկութեամբ էրթնս գիւղախումբին վրայ յարձակող ռուսները, նոյն գիւղի բնակիչներէն Իմամօղլուիներու զաւակներէն Օսման աղան

N1

ԹՈՒՐԵԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՅԵՐԻ ԲՈՆԱԳԱՎՈՒԹ ԵՎ «ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅՈՒՆ» ԵՐԻՏԹՈՒՐԵԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՊԻԶՈՆԻ «ՄԵՇԵՎԵՐԵԹ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ՀՈՂԱԿՈՆԸ «ՌՈՒՄԱԿԱՆ ՎՅՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՍԻՆ

13 հունիսի 1915 թ. Տրապիզոն

I.

Թուրք կառավարութեան պաշտօնական յայտարարութիւնը Տրապիզոնի հայերին

Բաւական տարիներէ ի վեր, Օսմանեան բնակչութեան մասը կազմող մեր հայ հայ-

Միայն այն ամեն իրեղէնները, որ բանակին պիտոյքը գոհացնելու բնոյթ ունին՝ կարելի է յոժար կամքով ծախել կառավարութեան:

3. Ճամբորդութեան միջոցին հանգստութեան համար պանդուկներ և մեծ շէնքեր

կը ձերբակալեն և իրենց կերպերով պատրաստելու համար կ'առաջարկեն իր կինը բերել և մերժելու պարագային կստիպեն:

Իսկ ծնող ծայրայեղ բռնության և տանջանքի տակ կինը պահած տեղին ակամայ կը հանէ: Պատուի թշնամի այս վայրի զագանները կուզեն Օսմանը ճամբել հրամանատարին կանչուած են ըսելով: Թշուառ Օսմանը պատահելիքը գուշակած ըլլալով չը հնազանդիր, որուն վրայ կը յարձակին և թները կապելէ ետոյ իր աչքին առաջ կնոջ պատիւը կը բռնաբարեն և ի վերջոյ ամենագարհուրելի կերպով, այսինքն մարմինը կտոր-կտոր բաժնելով կ'սպանեն:

Կարմիր Դրօշակի ընկերներէն խմբագրութիւնս այս վաւերագիրը շնորհակալութեամբ ստացաւ Արժանապատիւ Տէր-Մեսրոպ քահալանայ Մելեքիցի, որ Բաթումից Տրապիզոն էր մեկնել փախստականների օգնութեան գործով: Վաւերագիրս թարգմանութիւն է թուրքերէն բնագրի, որ Տէր-Մեսրոպը ծեռք բերելով՝ թուրքերէնի տեղեակ մի տանկահայի թարգմանել է տուել, որ և ամփոփելու հրատարակութեան ենք տալիս: Առաջին վաւերագրի ապահովացումների կեղծիքը ոչ միայն տեղահանութեան անունով անլուր քարոզերն ապացուցանում, այլև Տրապիզոնի թուրք պաշտօնական թերթում հրատարակուած, երկրորդ վաւերագիրը, ուր թուրքը խօսում է հայ և ռուսի վայրագութեանց մասին, շատ հասկանալի է թուրք ու թուրք ամբողջի խժոժութիւնները և կոտորածները քաջաւերելու:

«Համբաւաբեր», Թիֆլիս, 8 մայիսի 1916, N 19, էջ 600-601:

ած գերիներէից-թուրքերից առնուած տեղեկութիւններէից կան կենդանի մնացած հայեր ու բուլղոն էլ վերին աստիճանի կարիք ունեն հագուստի, ճերմակեղենի, ոտնամանի ու ուտելիքի: Իմ նախագահութեամբ կայացած կրկին խորհրդակցութիւնը խիստ կարևոր համարեց այդ ամենի մասին ձեռնարկել հոգալու, բայց մենք զուրկ ենք դրամական միջոցներից: Ուստի և այսու գամ խնդրելու Ձերդ Բարեպաշտութեանը բարեխոսել Արքայազանակատար Հայրապետի առաջ հրամայել մի որոշ գումար բաց թողնել կամ մեր անունով, որպէս զի հնարավորութիւն ունենանք գործնական քայլեր անելու, կամ մի հատուկ լիազոր ուղարկել այստեղ ու դնել նրա տրամադրութեան տակ այդ գումարը: Ես և ընտրված հանձնախումբը, Կ. Յ. Բ. Ը.՝ տեղական վարչութիւնը և տեղական մեր բոլոր ուժերը ամենակերպ միջոցներով կօզմենք ու կաջակցենք նրան, որպէս զի անպատրաստ չհանդիսանանք սպասվող անհրաժեշտ անելիքների առաջ:

Բացի այդ ամիսից, բաթումաբնակ տեղյակ տրապիզոնցիների ասելով, Տրապիզոնում և շրջակայքում ազգն ու եկեղեցին ունեցել են արժեքաւոր կալվածներ, հաստատութիւններ ու հնութիւններ, հարկ անհրաժեշտ է, որ մեր Զոզուր իշխանութիւնը լիազորի հատուկ մի հոգևորականի առաջին իսկ օրերից ազատորեն հոգալու և իրավատիրական տերի մեջ լինելու: Անտարակոյս, այդ լիազորի մասին հարկ անհրաժեշտ կլինի տեղեկացնել զինվորական և քաղաքացիական պատշաճ իշխանութիւններին:

N2

ՄԵՍՐՈՊ ԱՎԱԳ ԶԱՅՆԱՍ ՄԵԼՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ա.ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱԿԵՏ ՏԻՐԱՅԻՐ ՎԱՐՊԱՊԵՏԻՆ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 86

26 փետրվարի 1916 թ. Բաթում

Համեմայն դէպս, հայտնում եմ, որ խորհրդակցության կողմից ընտրած հանձնախումբը բաղկացած է հետագա անձերից՝ Երվանդ Շահմիլիկյան, Հմայակ Ֆէթվաճյան, Գարեգին Ղազարոսյան, Հարություն Ղազարյան, Հակոբ Սարյան և Միհրդատ Եմիրյան:

Ծխատել Բաթումի Մեսրոպ ա[վագ] ք[ահանայ] Մակագրութիւններ՝ շտամպ «Աւագ քահանայ Ա. Փրկիչ եկեղեցւոյ Հայոց Բաթում քաղաքի», «թ. 497», «26 փետր. 1916», «75/914»:

ՀԱԱ, ֆ. 57, գ. 2, գ. 1293, թ. 101: Բնագիր: Ձեռագիր:

N 87

Մ. ԱՎԱԳ ԶԱՅՆԱՍ ՄԵԼՅԱՆԻ ԶԵԿՈՒԹՅԱԳԻՐԸ ԱՄԵԼԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե-ԻՆ ՌԻԶԵ ԶԱՂԱՔՈՒՄ ՈՐԲԱՆՈՑ ԶԻՄԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 փետրվարի 1916 թ. Բաթում

Օրերունս Բաթումի հայ հասարակության անունից պարոնայք՝ Աշոտ Անտոնյան, Հարություն Չաքարյան և այլ 4 անձեր ընծաներ էին տարել նորանվաճ Ռիզե քաղաքը՝ սրա գրավելու առթիվ հաղթական մեր զորքերին բաժանելու: Այնտեղ իմանում են, որ Տրապիզոնի հայերին կոտորելուց հետո, նրանց երեխաներին նավերով բերել են Ռիզե մահմեդականների միջև

բաժանելու համար: Դիմում են տեղական իշխանության, որ ինչպէս երևացել է, վաղօրոք ինքն ևս թե իմացած է եղել ու թե միջոցների դիմած դրանց ի տարածելու: Ռիզեից հեռախոսով նրանք տեղեկացնում են մեզ: Ամնիջապէս հեռագրով հասուցանում են ի գիտութիւն Ձերդ Արքայազան ու Հայկական կենտրոնական կոմիտէին: Երեկ Ռիզեից վերադարձան Անտոնյան ու Չաքարյան ու իմ հրավիրանոք կայացած խորհրդակցութեանը զեկուցեցին իրենց իմացածները: Ռիզեում ու շրջակայքում կան ավելի քան 200 մանկահասակ երեխաներ, սկսած 3-ից մինչև 13-14 տարեկաններ: Կան հարճ ու հարս տարուած աղջիկներ ու կիներ, իրենց հետ բերել էին 2-ին: Կայացած այս ժողովը ընտրեց 8 հոգուց բաղկացած մի մարմին, որոնցից 3-ը կին: ԿՀԲԸ Բաթումի վարչութիւնը հանձնարարեց մի մարմնին գնալ Ռիզե, վարձել ժամանակավորապէս մի տուն, հետզհետե հավաքել այդպիսի որբերին, խնամել ու խումբ խումբ ուղարկել Բաթում: Այս նպատակով բաց թողեց 500 ռ[ուբլի] իր միջոցներից: Սրա հետ միաժամանակ որոշեց այդ շրջանից բերվածներին Բաթում պահել թէ Տրապիզոնին մոտ լինելու ու թէ Սև ծովի ափերում բնակվող դրանց ազգականներին դուրսընկնելու տալու, որ շուտով կարողանան գտնել իրենց հարազատիկներին: Ամենայն հաւանականութեամբ կարճ ժամանակում սրանց՝ որբերի, փախցված և այժմ ի հայտ եկած աղջիկների ու կանանց թիվը կհասնի հարյուրների, որոնց հարկ անհրաժեշտ կլինի խնամել ու պահել այստեղ:

Սրտի կակիծով և ընդ մին, գեթ այսքաններին կենդանի գտնուելու ուրախությամբ լցուած գամ հայ որբերի, այրիների ու տառապալների մեծ Յորդ ու Վեհափառ խնամակալիդ ամենախոնարհաբար զեկուցանելու, ի լրումն իմ հեռագրի ու հայտարարելու, որ ես, իբրև նախագահ Բաթումի շրջանային կոմիտիայի դիմեցի և ստացա 60 ձեռք ձերմակեղեն ու ոտնաման սպասվող որբերի համար. առ ժամանակ կընդունեն ու կը պատսպարեն մեր ապաստանում՝ հուսալով ու հավատալով, որ Ձեր Վեհափառութիւնը չի թողնի մեզ առանց ուշադրության, այլ կտարածի իր մեծ հովանին ու մեզ վրա:

Անկախ այս ամենից, Ռիզեից վերադարձվողները ասում են, որ երևացել են հայ եկեղեցական զգեստներ, խաչեր ևն: Սրանք, անշուշտ, Տրապիզոնից բերվածներ ու կողոպտվածներ

N 3

Մ. ԱՎԱԳ ԶԱՅՆԱՍ ՄԵԼՅԱՆԻ ԶԵԿՈՒԹՅԱԳԻՐԸ ԱՄԵԼԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե-ԻՆ ՌԻԶԵ ԶԱՂԱՔՈՒՄ ՈՐԲԱՆՈՑ ԶԻՄԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 փետրվարի 1916 թ. Բաթում

կլինեն: Կարևոր է հատուկ մի հոգևոր, ազատ պաշտօնյայի ուղարկել այն կողմերը: Բազմի մահմեդական ընկերութիւնը հատուկ շնորհակալութեամբ է այս կողմերը բժ[իշկ] Սուլթանովին, որը իր հատուկ օգնականներով բացառապէս զբաղված է մահմեդականներին նպաստելու, սրանց վիճակագրութիւնը վարելու, կարիքներն ուսումնասիրելու գործով: Վրաց բարեգոր-

ծական ընկերութիւնը աջարացիների համար և նպաստ և դարձրեց և՛ իրավաբանական օգնութիւն է մատակարարում ընդարձակ չափերով: Իսկ ամենից շատ նահատակված, ամեն բանից զրկված ու կողոպտված հայ չունի նոյնիսկ մի շրջիկ հովիվ, ուսումնասիրող, քաջաւերող, խորհրդատու: Եղածներս էլ այնքան պաշտօններով ու զբաղումներով ծանրաբեռնված ենք, որ հակառակ մեր բուռն ցանկության, չենք էլ կարողանում հասնել:

Վեհափառ Տէր, գիտեմ, որ անթիվ են Ձեր հոգւերը ու ծանր կացութիւնը, սակայն ազգապետական Վեհ ու մեծ արտիդ ու հոգածութեանը չը ներկայացնել շրջանիս հայերուդ կացութիւնը չեմ կարող: Մեծ է ու խոր է հաւատս, որ հայի... [մեկ բառ ընթեմնելի չէ] կչորացնի Ձեր կարենալու հասնելու ամենքին ու ամեն տեղ:

Ձերդ Ա. Օծութեան ամենախոնարհ ծառա՝ Մեսրոպ ավագ քահանայ Մելյան Մակագրութիւններ՝ «4 մարտի 1916», «թ. 546», «Կրկին գրել Մեսրոպ Եպիսկոպոսին ի շուտափոյթ տնօրինութիւնը»», «75/914»:

ՀԱԱ, ֆ. 57, գ. 2, գ. 1293, թ. 112 և շրջ.:Բնագիր: Ձեռագիր:

N 4

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՍԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍԱՆԻ ԵՎ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ԹԵՍԻ ԱՆԱՋՆՈՐԿ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍԱՆԻՆ ՄԵՆՐՈՊ ԱՎԱԳ ԶԱՅՆԱՍ ՄԵԼՅԱՆԻ 5000 ՌՈՒԲԼԻ ՌԻՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԶԻՆԻՍ ԱՅՂ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑԵԼԸՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ N 504

3 մարտի 1916 [Ս. Էջմիածին]

Նորին Ս[ուրբ] Օծութեան հրամանով Դիվանս հանձնարարում է Գերապատվութեանդ կարգադրել Ձեր ձեռքի տակ եղած միջոցներից առ այժմ 5000 ռուբ[լի] փոխադրել Բաթում Տ[եր] Մեսրոպ ավագ քահանայ Մելյանին, որպէս զի Տրապիզոնի գրավելուց հետո, գործադրվի այնտեղի և ծովամերձ շրջանների ազատված հայ թշվառների կարիքների վրայ:

Անկախ դրանից Դիւանս խնդրում է Գերապատվութեանդ հայտնել, արդոյք՞ պետք եղած ժամանակ Բաթումի Տ[եր] Մեսրոպ ավագ քահանայ այժմէն իսկ կարող կլինի՞ գնալ անձամբ նոր գրավված վայրերը՝ հայերին օգնութիւն հասցնելու գործով:

[ստորագրութիւնն ընթեմնելի չէ]

N 5

N 508 3 մարտի 1916 [Ս. Էջմիածին]

Հայրապետական Դիվանս, ի հետևումն Ձեր փետրվարի 26-ի N86 գրութեան, հայտնում է, որ Նորին Սրբութեան հրամանով, սրա հետ միաժամանակ, հանձնարարվեց Վրաստանի Հայոց Թեմակալ Առաջնորդին առ այժմ փոխադրել Ձեզ 5000 ռուբլի գործադրելու Տրապիզոնի և ծովամերձ շրջանների հայ գաղթականների կարիքների վրա:

[ստորագրութիւնն ընթեմնելի չէ]

ՀԱԱ, ֆ. 57, գ. 2, գ. 1293, թ. 101-102: Պատճեն: Ձեռագիր:

N 6

ՎՐԱՍԱՆԻ ԵՎ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ԹԵՍԻՎԱՆ ԱՆԱՋՆՈՐԿ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍԱՆԻ ԶԵԿՈՒԹՅԱԳԻՐԸ ԱՄԵԼԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե-ԻՆ ԲԱԹՈՒՄԻ ԿՀԲԸ-Ն ՄԱՍՆԱԳՅՈՒՂԻՆ 3000 ՌՈՒԲԼԻ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ԵՎ ՄԵՍՐՈՊ ԱՎԱԳ ԶԱՅՆԱՍ ՄԵԼՅԱՆԻՆ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՎԻԼԱՅԵԹ ՌԻՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 264

9 մարտի 1916 թ. Թիֆլիս

Դիվանի ամսիս 3-ի հ[ամար] 504 գրութեան վերաբերությամբ ամենախոնարհաբար հայտնում եմ, որ իմ տրամադրության տակ գաղթականների գումար չունեմ, իմ ստացած բոլոր փողերը ամենիցապէս հանձնում եմ Կենդրոնական Կոմիտէին՝, որը իր նիստում արդեն որոշել է անմիջապէս ուղարկել Բաթումի Բարեգործական ճյուղին 3000 ռուբլի, բացի այդ՝ առաջարկել բանալու որբանոց: Իսկ ես՝ ի կատարումն Վեհափառութեանդ պատվերին՝ հեռագրով կարգադրեցի Մելյան քահանային գնալ նոր գրավված վայրերը և առաջին օգնութիւնն հասցնել ազատված հայերին:

Առաջնորդ թեմի՝ Մեսրոպ Եպիսկոպոս Մակագրութիւններ՝ «[թ. 598], «11 մարտի 1916», «75/914»:

ՀԱԱ, ֆ. 57, գ. 2, գ. 1293, թ. 118: Բնագիր: Ձեռագիր:

Շարունակելի

*Պարոյր Լևոնյան (1884-1933 թթ.), (աշուղ Ջիվանու որդին) հասարակական-քաղաքական գործիչ, ՀՀԴ անդամ, ապա Սոցիալիստ-հեղափոխական կուսակցության անդամ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անդամագրվել է հայ կամավորական շարժմանը: Եղել է Հայկական կամավորական II դրուժինայի հրամանատարի համհարգ, ապա Վանի նահանգապետի օգնական: 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո նշանակվել է Կովկասյան ռազմածակատի ռազմածովային կոմիտարի օգնական: 1918թ.՝ Անդրկովկասյան սեյմի անդամ: 1919-1920թթ. եղել է Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ:

** Խոսքը Գևորգ Ե. Սուրենյանցի (Տաղիսեցի) մասին է, որը 1911-1930թթ. եղել է Ամենայն հայոց կաթողիկոս:

*** Փախստականներին և կամավորներին օգնություն կազմակերպելու նպատակով, Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը 1914թ. սեպտեմբերի 14-ին Թիֆլիսում կայացած համագումարում ընտրում է Հայկական կենտրոնական կոմիտեից բաղկացած 24 անդամ: Կոմիտեի անդամներն էին՝ Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (պատվավոր նախագահ), Սամսոն Հարությունյանը (նախագահ), Ալ. Խատիսյանը, Հովս. Խունունցը, Ա. Մելիք-Ազարյանը և ուրիշներ: Ռուսական իշխանությունների կողմից պաշտոնապէս ճանաչվել է 1915թ. օգոստոսի 30-ին և ներկայացուցիչ ուներ Ներքին գործերի նախարարությունում՝ հանձին Պետական դուռայի անդամ Մ. Ամենյանի:

Ծանոթագրութիւններ
77 ՀԱԱ, ֆ. 968, գ. 1, գ. 10, թ. 52:
78 ՀԱԱ, ֆ. 654, գ. 4, գ. 4, թ. 82:
79 Համբաւաբեր», N 47, 20 նոյեմբերի 1916, էջ 1502: ՀԱԱ, ֆ. 968, գ. 1, գ. 11, թ. 11 և շրջ.:
80 ՀԱԱ, ֆ. 28, գ. 1, գ. 195, թ. 2:
81 ՀԱԱ, ֆ. 968, գ. 1, գ. 30, թ. 119:
82 ՀԱԱ, ֆ. 1457, գ. 2, գ. 5, թ. 64:
83 ՀԱԱ, ֆ. 968, գ. 1, գ. 30, թ. 2:
84 ՀԱԱ, ֆ. 968, գ. 1, գ. 11, թ. 42:
85 ՀԱԱ, ֆ. 968, գ. 1, գ. 11, թ. 55:
86 ՀԱԱ, ֆ. 968, գ. 1, գ. 11, թ. 57:
87 ՀԱԱ, ֆ. 1168, գ. 1, գ. 320, թ. 81:
88 ՀԱԱ, ֆ. 968, գ. 1, գ. 11, թ. 58:

ՀԱԿՈՐ ԳՈՒՐՈՒՆՅԱՆ

Սկիզբը՝ 3-րդ էջում:

Քիչ մը ուշագրաւ է, որ հարիւրէն 43-ը հաստատել, թէ երբեք հայու մը հետ չէ խօսած (արդեօք երբեք հայու մը հետ հայերէն չէ խօսած), քանի որ, հարցախոյզը պատասխանողներուն մեծամասնութիւնը Պոլիս կը բնակի եւ անհաւանական է, որ երբեք հայու մը համոզուած չըլլայ: Եթէ այս պատասխանը ճշմարիտ չէ, կարելի է վախի վերագրել:

Պուր ծեփ մաս կը նկատէ՞ք համընթացական այն գաղութին որ Արխագիա, Ռուսիա եւ ուրիշ տեղեր կ'ապրի եւ որ թուրքիան ձգեց մէկ դարէ աւելի առաջ:

- Համեմատու.
- A. Այո 66.28
 - B. Ոչ, թեւ նոյն ժառանգ ունիմք 10.47
 - C. Ոչ, նոյնը չենք 5.81
 - D. Ոչ, բայց պիտի փափաքէի աւելի գիտնալ իրենց շուրջ 12.79
 - E. Թերեւս/Չեմ գիտեր 4.65

Ուրիշ աւելցնելիք ունի՞ք

(Ընտիր պատասխաններ)

- «Ես ինձի հարց կու տամ, թէ որուն կը պատկանի պատմութիւնս»:
- «Հեմընիլի եմ եւ հարաւ եմ անով»:
- «Շատ ընտանիքներ ունինք, որ Համընթացին ձեռքով եւ մեկնեցան Ռուսիա եւ Վրաստան: Իրենք պահպանած են սովորութիւններ եւ բառեր, զորս մենք մոռցած ենք, եւ իրենք կը գործածեն ճիշդ կերպով»:
- «Իմ անձնական համոզումս է, որ հեմընիլիները ունին իրենց սեփական արմատները, որ ուրիշ արմատներէ բոլորովին տարբեր են»:
- «Ձիս կը հետաքրքրէ գիտնալ, թէ հեմընիլիները հայերուն կապուած են, եւ թէ հայերէնը աւելի դիւրին պիտի չըլլա՞ր եթէ լատինատառ այբուբենով գրուէր»:
- «Հեմընիլի ըլլալը պատիւ չէ»:
- «Կեցցէ՛ ժողովուրդներու եղբայրութիւնը»:
- «Շատ ուրախ եմ հեմընիլի ըլլալով»:
- «Իմ կարծիքս այն է, որ համընթացին Արեւմտահայերէնի բարբառ մըն է: Քանի որ մենք այբուբեն չունինք, շատ բառեր սխալ կը գրենք... Ինքնաշխատութեամբ, Արեւելահայերէն կը սորվիմ, կարգ մը գիրքերու եւ բառարաններու օգնութեամբ: Յուսամ ձեր դասախօսութիւնը կարգալու առիթ կ'ունենամ»:
- «Հարաւ եւ ուրախ եմ հեմընիլի ըլլալով: Հեմընիլիները շատ ժամանակ հայերու հետ ապրած են, անոր համար այս ձեւով զարգացած ենք»:
- «Հեմընիլիները շատ զօրաւոր է, երբեք թուրք ազգայնական չենք եւ ընկերակարական ենք»:
- «Շատ հետաքրքրուած էի այս հարցախոյզով, բայց նոյնիքն հարցախոյզի բնոյթէն հետեցնելով, յայտնի է թէ, ո՞վ կայ ասոր ետին»:
- «Թուրք հեմընիլիները գիտեն իրենց հայկական արմատներու մասին: Բայց լեզուն եւ կրօնը կորսնցուցին դարեր առաջ: Ատիկա շատ մեծ նշանակութիւն չունի: Անոնք, որ կը հերքեն այս իրողութիւնը, պարզապէս կը խուսափին իրենց դէմ խորականութեան ալիքէ մը»:
- «Թիւ 8 հարցումին շուրջ՝ այսօրուան հեմընիլիները կարելի չէ սահմանել հեմընիլի կամ թուրք տարբերակի մը պիտակով: Ուրիշ նրբերանգներ, կամ բնութագրումներ կարելի է նշանակել»:
- «Թիւ 10 հարցումին շուրջ՝ այո, մեր մեջ անուսնանալը կը նպաստէ մեր ինքնութեան պահպանումին: Նաեւ աշխարհագրութիւնը: Բայց կառավարութիւնը պէտք է զարկ տայ, մեր ազգային մշակոյթի գարգացման եւ տարածման, այս ձեւով կը սատարէ մեր ինքնութեան պահպանումին»:
- «Թիւ 12՝ այն կարծիքին եմ որ համընթացին արմատը Արեւմտահայերէնն է: Բայց վստահ չեմ գեղային պատկանելիութեան շուրջ»:

Հակոբ Գուրունյանը ծնվել է 1916թ. փետրվարի 29-ին Արխագիայի Գուլրիփշի շրջանի Ծեբելդա գյուղում՝ կոչակարի ընտանիքում: Նա մանկուց ճանաչել է աղքատության դառնությունները: Հայրը՝ Թորոսը, մահացել է 1934թ., բազմադարձ ընտանիքի հոգսը թողնելով կնոջ ուսերին, որը տասը երեխա էր ունեցել (ցավոք, նրանցից հինգը վաղաժամ մահացել էին):

Հակոբ Գուրունյանը Ծեբելդայի հայկական յոթամյա դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Սուխումի հայկական մանկավարժական տեխնիկումում: Այն ավարտելուց հետո, 17 տարեկան հասակում, նրան ուղարկում են Արխագիայի հայկական դպրոցներից մեկում աշխատելու որպէս տարրական դասարանների ուսուցիչ: Երկու տարի անց նրան նշանակում են Գուլրիփշի շրջանի Մերխետլի գյուղի հայկական 8-ամյա դպրոցի տնօրէն: Այդ դպրոցում աշխատելու երեք տարիներին նա շարունակեց գիշեր ցերեկ ինքնակրթությամբ զբաղվել, նաև գրական փորձեր էր անում: Հիմնականում գրում էր բանաստեղծություններ և փոքրիկ պատմվածքներ: Սիրում էր նկարագրել բնությունը և գյուղի մարդկանց:

Նա չբավարարվեց ստացած կրթությամբ և 1937թ. եկավ Հայաստան և ընդունվեց Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: Պատերազմի տարիներին ուսումն ընդհատվեց: Այն շարունակեց և ավարտեց 1946թ. ու անմիջապէս ընդունվեց ասպիրանտուրա: Հիվանդության պատճառով կիսատ թողեց և վերադարձավ հայրենի գյուղ՝ Ծեբելդա: Շատ էր սիրում իր ծննդավայրը: Նրա առաջին ժողովածուի մեջ կա բանաստեղծություն նվիրված հայրենի գյուղին.

*...Թեզ երբեք, երբեք ես չմոռացա,
Մանկության օրրան, իմ մայր Ծեբելդա...
Հայրական իմ տուն, ես վառ պահեցի
Խոշտանգված պապիս օջախն Համընթացին...*

Այստեղ էլ անուսնացավ և ստեղծեց սիրով ու ջերմությամբ լի իր ընտանիքը: Նա չցանկացավ տեղափոխվել քաղաք, չնայած մի քանի անգամ հրավիրեցին աշխատելու Սուխումի հայկական միջնակարգ դպրոցում և 45 տարի շարունակ աշխատեց հայրենի գյուղում՝ մանուկներին տալով հայեցի կրթություն:

Նա երբեք չդադարեցրեց իր գրական գործունեությունը և Երևանում, Թբիլիսիում և Սուխումում հրատարակեց 15 գիրք (մեկական՝ վրացերեն և արբազերեն), հիմնականում դպրոցական միջին և բարձր դասարանների աշակերտների համար:


Նա հաճախ էր գալիս Երևան, որտեղ լույս էին տեսնում նրա գրքերը: 1970-80-ական թթ., երբ ես աշխատում էի «Պիոներ կանչ» թերթի և «Պիոներ» ամսագրի խմբագրություններում, այցելում էր ինձ և տպագրելու համար տալիս իր և սաների, ինչպէս նաև Սուխումի «Սևծովյան այգաբաց» գրական միավորման անդամների ստեղծագործությունները: Եվ նրա ամեն այցը, խոսքն ու զրույցը ջերմությամբ ու աշխույժով էին լցնում խմբագրությունը:

1973 թվականից Հայաստանի, իսկ ավելի վաղ՝ Վրաստանի և Արխագիայի գրողների միությունների անդամ էր:

Հակոբ Գուրունյանը մահացավ 1997թ. հունվարի 15-ին Երևանում:

Նա դեռ երիտասարդ տարիներին էր գիտակցել բանահյուսության գրառման կարևորությունը և 1940-ականներից հավաքում էր համընթացների բանավեպերի մեծ շարք: Ժողովրդական բառուբանի հանդեպ սերը երկի ժառանգել էր մորից՝ Պայծառ Քեշիշյանից, որը խոսքաշեն կին

էր և զրույցների ընթացքում հաճախ էր դիմում համընթացների բանահյուսության գանձարանին: Պայծառ Քեշիշյանն ապրեց 90 տարի և միշտ իր խոսքը համեմուն էր առած-ասացվածքներով: Մորից, համագյուղացիներից ու այլևայլ վայրերի համընթացներից գրառած շուրջ 175 խաղիկներն ու երգերը, մոտ 90 հեքիաթներն ու զրույցները, զվարճախոսությունները,



ՆՎԻՐՈՒՄ ԴՊՐՈՑԻՆ

Կյանքս ես ընդմիշտ քեզ եմ նվիրել,
Պարզ և իմ սիրո, իմ սուրբ, իմ դպրոց,
Քո պատերի մեջ ես կյանքս եմ մաշել,
Որ դու գորանաս, իմ հոգու Մաշտոց...

Քո պատերի մեջ ինչքան հույզեր կան,
Սովորեցնելու ճիգեր՝ հաղթանակ,
Քո պատերի մեջ հոգիս մշտական
Գտել է հանգիստ ու մի վե՛տ տանջանք:

Աղոթքի նման ես քեզ պաշտել եմ,
Սիրել, փայփայել, ցավել բյուր օրեր,
Միայն լույս գիրն եմ տեսել ես կյանքում՝
Տքնել քեզ համար թե՛ գոր, թե՛ գիշեր:

Երմակ է իջել իմ սև մազերին,
Բայց հոգիս թարմ է ու քեզնով լեցուն.
Նայում եմ ես քեզ՝ կյանքիս պարզին,
Ու քո ջերմ շնչով ապրում եմ, շնչում...

1973թ. հուլիս, Ծեբելդա

նաև բազմաթիվ հանելուկները, առած-ասացվածքները Հակոբ Գուրունյանը հրատարակել է իր կազմած և ծանոթագրած «Համընթացայ բանահյուսություն» (Երևան, 1991թ.) գրքում: Այդ ժողովածուում նա ընդգրկել է նաև մոտ մեկուկես տասնյակ այլ բանահավաքների գրառած համընթացայ բանավեպերի մեծ շարք ևս, դրանով իսկ փրկելով անգնահատելի գանձեր: «Ձայն հմաշենակամի» ընթերցողներին ենք ներկայացնում Հակոբ Գուրունյանի բանաստեղծություններից մեկը և նրա գրառած խաղիկներից 10-ը:

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԽԱՂԻԿՆԵՐ (ՄԸՆԻՆԵՐ)

Ինձ վիրի դոնձերը,
Հոպ-հոպ գընին մոնձերը,
Սիրուն ախճիկ դեսնուն նա,
Չուռ տընին կու ֆեսերը:

Դոնը վերտին փորուշ ա,
Փորուշ ա նա, փորուշ ա,
Մո՛մ, ախճիկդ դոնուշ ա,
Շակարըն ալ օնուշ ա:

Հայդի էշտոնկ բիդադա,
Ես թափիմ՝ տուն մեկդեդա.
Ես ախճիկ իմ, տուն դդա,
Էրգուսս ալ մեզ կեդա:

Ինձ վիրը բայիր ա,
Չեյս թարաֆը չայիր ա,
Ղայրաթ արեք ախճիկնի,
Գարկըվուշի դարի յա:

Կեդին ընտին կնածի,
Չարուխնիս լվածի.
Էլի խոսկի չաշեծի,
Յարիս դեսնուշ կնածի:

Դոնը լամբըն լուսնի կու,
Այդին լազդը պուսնի կու,
Սիրուն ախճիկ մը դեսա,
Սիդըս գարի-լուսնի կու:

Այ աս դարի, աս դարի,
Խընձեր չըղավ աս դարի.
Հազար ախճիկ մեզ փարի,
Անող չըղավ աս դարի:

Կընծի ածուկը սընծի,
Օտկըս առավ սև գընձի.
Դերա, միրուկըդ խոնձի,
Ախճիկդ չդվիր ինձի:

Սարեյն ի վիր դավուշոն,
Ախճիկ, դըղին դուր նշոն.
Դաս բիդի նա՝ հիմի դուր,
Սողը կ'ըլլիս փերիշոն:

Աս դարի գոնեպ ունիմ,
Գոնեպը մոնող չունիմ...
Հոյս գասիմ տա՝ հայս մը պիր,
Հեյս գասա տա՝ փարա չունիմ:

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄԱԵՆԱԿԱՆ» հայերենակցական-բարեգործական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Հեռախոս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեջբերման դեպքում հղումը «Ձայն համընթացային» պարտադիր է: Հրատարակվում է 2004թ. օգոստոսից:

«ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван), Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издаётся с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. «HAMSHEN» Compatriotic-charitable public organization (Yerevan). «DZAYN HAMSHENAKAN». Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org